



№ 11

ՆՈՅԵՄԲԵՐ

1887



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՁԵ 11

«Աղբիւր» գրականական ուրօմ Տ. Տ. ՄԱԿԱՐ Կաթողիկոս ամենայն Հայոց:

Հայ գինուոր (ոտանաւոր) . . . . . Յ. Ղազարեանց:

Վահան Մամիկոնեան (Հայոց Պատմութիւն) . . . Ա. Բարսեղեան:

Բանուոր (ոտանաւոր) . . . . . Յ. Ղազարեանց:

Անկոչ հիւրեր (պատկեր)

Տիրուցի աղջիկը (Ժողովրդական աւանդութիւն

Ռիկէնսէից) . . . . . Նզիստեղծ Մարկոմ Զ.

Լեռնական վտակ (բանաստեղծութիւն) . . . Լ. Մանուէլեան:

Նախաճաշիկ (պատկեր)

Ռոբինզոն . . . . . Փ. Վարդանեան:

Ղարաբաղի մօր երգը:

Ղարաբաղի կին:

## ՀԵՏԱՔՐԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Շահաւէտ փողոցներ: Նշանակող նիւթ: Խաղաղան և դատարան: Կոչնակ: Զգուշութիւն:

## ԶՈՒՍՐՃԱԼԻՔ

Թուարանական ֆօկլօր: Հանելուկ: Շուտասելուկ: Նախընթաց Ա-ի մէջ եղած Հանելուկների և ցանցի բացատրութիւնը: Յայտարարութիւններ:

## ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

Աղբ: Կովկասեան գինուորագրութիւն:

Առ ալ. Բաֆֆի . . . . . Ղ. Աղայեանց:

Խ ա ո ռ լ ու ռ ե ռ. Հայերէն հրատարակութիւններ: «Մշակ» «Աղբիւր» բաժանորդագրութիւնը: Մեր հեղինակներին, թարգմանիչներին: Բաժանորդագրութիւն: Մեր պատուէրները: Թարգմանութիւններ: Մեր գործակալներին:

Առաւիս ընդ առակին . . . . . Ղ. Աղայեանց

Պատասխաններ: Յայտարարութիւններ:

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՅ

ԲԱՅՈՒԱԾ Ի «ԱՂԲԻՐԻ» 1888 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ:

Ներկայ Ձե-ի հետ ուղարկում ենք պատրաստած նամակներ և ծրարներ ու առանձին յայտարարական թերթ: Խանարհարար խնդրում ենք բաժանորդ զրուել ցանկացողները շտապեն շուտով վերանորոգել իրանց բաժանորդագրութիւնը, կարելիին չափ պարզ գրելով հայտեն:

ԱՊՐԱՊԻԿ ՈՉ ՈՒՅԻՅ ԶԻ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ:

Խնդրում ենք մեր մշտական բաժանորդներին տարածել «ԱՂԲԻՐԸ» իրանց շրջաններում, որով միջոց կըտան մեզ աւելի ընդարձակել և շքեղացնել:

ԵԿՈՂ 1888 ԹԻՒՆ

# ՄՇԱԿ

## ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐԸ

Կը հրատարակվի թիֆլիսում, նոյն գերբով և նոյն պրոգրամայով:  
Մենք կըստանանք սեփական հեռագիրներ:

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլի է. վեց ամսվանը 6 ռուբլի:

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է խմբագրատանը (բարձրակարգ և Բա-  
ղարնայա փողոցները անկիւնում, Թամամշեյի տանը):

Կայսրութեան ուրիշ քաղաքներէն «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար պէտք  
է գիծել հետեւեալ հասցեով. Тифлисъ, Редакция газеты „МШАКЪ“,  
իսկ արտասահմանից. Tiflis Rédaction du journal arménien „MSCHAK“.

Առաջիկայ տարւոյ «ՄՇԱԿԻ» զրոգրամը նոյնը կը լինի, այսինքն I. Առաջ-  
նորդող յօդուածներ. II. Ներքին առևտուր թիւեր. Ընդհանուր յօդուածներ  
(Հասարակական, դատաւարական, անասական և այլն) Թղթակցութիւններ, լու-  
րեր. III. Կառավարչական կարգադրութիւններ. IV. Արտաքին առևտուր թիւեր.  
Ընդհանուր յօդուածներ, Թղթակցութիւններ, լուրեր. V. Խառն լուրեր. VI.  
Հեռագրեր և Բօրօս, VII. Բանասիրական. Ֆելիետոններ, Ճանապար-  
հադրութիւններ, աղագրական, ուսումնական յօդուածներ, վէպեր և այլն. VIII.  
Յայտարարութիւններ:

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուներով. վճարը՝ բահին 2 կոպիկ:

Տասն անգամից աւելի տպվող յայտարարութեան համար նշանաւոր պիտի կրվին:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՆԻ

1888-ին  
(ԵՐԹԵՐՈՐԻ ՏԱՐԻ)

# ԱՐԶԱՐԱՆՔ

## ՅԱՆԱԹԱԹԵՐԹԸ

ԿԸՐԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՄԻՖԼԻՍՈՅՏ ԳԻՐԳՈՎ ԵՒ ՀՆՏԵՒԵՍԼ ՊՐՈԳՐԱՄԱՅՈՎ.

I. Տեղեկութիւններ կառավարութեան զրոգրութիւնների և օրէնսդրական  
միջոցները մասին — II. Առաջնորդող յօդուածներ Հասարակական կեանքի նշանաւոր  
հարցերը վերաբերութեամբ: — III. Թղթակցութիւններ հայաբնակ աւերկից. ընդ-  
հանուր առումով հայ և օտար լրագրիւններ տեղեկութիւնների և կարծիքներ: —  
IV. Տնտեսական և առևտրական հարցերը ընդառառութեամբ: — V. Յօդուածներ  
ժողովրդական կրթութեան վերաբերութեամբ: — VI. Արտաքին առևտուր թիւեր.  
յօդուածներ և տեղեկութիւններ արտասահմանեան Հասարակական և քաղաքական  
կեանքի նշանաւոր անցքերը մասին: — VII. Կրթական և մասնաւորապէս թիւեր: — VIII.  
Ֆելետոն — IX. Չանաղան լուրեր: — X. Յայտարարութիւններ:

«ԱՐԶԱՐԱՆՔԻՆ» 1888 թ. ԿԱԶՄԱՍԱԿՏԵՆ ԲՈՂՈՐ ՆԵՐԿԱՅ ԱԶԽԱՍԱԿՏԵՐԸ.

Տարեկան բաժանորդագրին է 5 ռ. Կէս տարւանը 3 ռ.

Թիֆլիսում ստորագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և  
«Կենտրոնական գրալաճառանոցում»:

Օտարաքաղաքացիք գիծում են՝ Тифлисъ, въ Редакцію „АРЦА-  
ГАНКЪ“. Արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal „ARDZA-  
GANG“.

ԱՐԶԱՐԱՆԿ ԲԱԺԱՆՈՐԻՏԱԳՐՈՒԹԻՒՆ 2Ի ԲՆԴՈՒՆՎՈՒՄ:

Խմբագիր-հրատարակիչ ԱՐԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ



ԲԱՅՈՒԱԾ Է ԱՌԱՋԻԿԱՅ 1888 ԹՈՒՆԿԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ



**ՄԻԱՄԱՆԱՅ ՊԱՏԱՐԱԶԱՐԴ ՀԱՆԳԻՍԻ**

(ԵՐԵՎԱՆԵՐԻ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

Վ Ե Յ Ե Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ի

Տարէնը լոյս է տեսնում 12 համար, 3—4 տարադրական թերթից իւրաքանչիւր համարը:

Առաջիկայ 1888 թ. դիտաւորութիւն իայ խնստ ընդարձակել «ԱՂԲԻԻՐԻ» բ. բաժինը, խի ա. բաժինը պիտի աշխատենք, ալահալանելով ամսագրի բուն նպատակն ու ուղղութիւնը, դարձնել մի պատկերազարդ Հանդէս փոխարինող շքեղ հրատարակութիւն:

«ԱՂԲԻԻՐԻ» 1888 թ. I. սրէմիան՝ ՅԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴԸ ԵՒ ՄՈԳԵՐԻ ԵՐԿՐՊԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԼՖԻԿԱՆԻ օլէօգրաֆիա, արդէն թէ Թիֆլիզում և թէ գաւառներում մի-մի օրինակ կան 75 ցոյց բաժանորդներ: Այս պատկերը կարող է ամենաշքեղ հիւրասենեակները զարդարող պատկերներէն մէկը լինել: 1888 «ԱՂԲԻԻՐԻ» բաժանորդ գրուողը հէնց իսկոյն կըստանայ այդ սրէմիան բաժանորդ գրուելուն պէս:

II. Պրէմիան՝ մի ԳԵՂԵՅԻԿ ԳԻՐԲ: Սա կուղարկուի բաժանորդներին Ձատկուայ №-ի հետ:

«ԱՂԲԻԻՐԻ» 1888 թ. III. սրէմիան՝ մեր տաղանդաւոր նկարիչ Գ. Բաշինջադեանի յայտնի «ԱՂԹԱՄԱՐԱՅ ԾՈՎԱԿԸ» վիճակ կըզցուի «ԱՂԲԻԻՐԻ» բաժանորդներին մէջ սեպտեմբեր ամսին, ներկայութեամբ Թիֆլիզում գտնուող բաժանորդներին և հետաքրքրուողներին: «ԱՂԹԱՄԱՐԱՅ ԾՈՎԱԿԸ» տանող բաժանորդը, եթէ կամենայ կարող է այն թողնել խմբագրութեանս և ստանալ 100 ռուբլի:

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ**

**ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ**

I) Վէպեր, մանրավէպեր, զրոյցներ, առակներ, հէքեաթներ, ճանապարհորդութիւններ, կենսագրութիւններ: II) Բանաստեղծութիւններ: III) Գիտութիւն և արուեստ: IV) Հետաքրքիր տեղեկութիւններ: V) Այլև այլք:

**Զ Ո Ւ Ա Ր Ճ Ա Լ Ի Ք**

VI) Մանկական, Փրֆօբէլեան, շախմատի և այլ խաղեր, Բերուներ, Թուրքական խնդրներ, Անեկդոտներ, Հանելուկներ, շուտասուելուկներ: VII) Երգեր՝ ձայնագրած (նօտաներով):

**ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ**

VIII) Կրթութեան և դաստիարակութեան վերաբերեալ յօդուածներ և տեղեկութիւններ: IX) Առաջարկութիւններ, խորհուրդներ: X) Մատենախօսութիւն և նոր գրքեր: XI) Խառն լուրեր: XII) Պատասխաններ. Յայտարարութիւններ:

«ԱՂԲԻԻՐԻ» տարեկան բաժանորդագիրն 3 ռ. է, սրէմիաների ծրարի համար պէտք է ուղարկել 3 հատ 7 կ. մարկաներ:

ԱՊԱՌԻԿ ՈՉՈՔԻՑ ԶԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ:

Հասցէն՝ Тифлисъ, Редація «Агбюръ», իսկ արտասահմանից՝ Tiflis (Caucase) Rédaction du journal «AGBUR».

Խմբագիր-Հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՅ

# ԱՂԲԻԻՐ

ՄԻԱՄՍԵԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԿՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԵՐԵՎԱՆԵՐԸ

ԵՒ

ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀԻՆԴԵՐՈՐԴ ՏԱՐԻ

№ 11

ՆՈՅԵՄԲԵՐ

ԹԻՖԼԻՉ

ՅՈՂՀԱՆՆԵՍ ԻՐԱՏԻՐՈՍԱԾԱՆՅԻ ՏՊԱՐԱՆ

ՈՐԵՆԵԱՆ ՓՈՊՈՑ, № 11/2

1887





«ԱՂԲԻՐԻ» ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՂԲՈՄ

**Տ. Տ. ՄԱԿԱՐ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ**

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ**

(Օժժան III-րդ տարեդարձի առթիւ):

Дозволено цензурою, Тифлисъ, 21 Ноября 1887 г.  
 Типографія И. Мартиросіанца, на Орб. ул., д. № 1 и 2

ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐ



նա, Հայ զինուոր, ուրախ անխռով,  
Գէպ, այդ սուրբ հրաւերն աներկիւղ սրտով.  
Ու ձեռքդ հրացան, կատարէ պարտքդ,  
Սուրբ հայրենեացդ մի խնայէ կեանքդ:

Գարեր են եկել, անցել—գլորուել,  
Զատ կարօտել ենք, շատ էլ փափաղել,  
Բայց անձն ապաշտ պան այդ ղէնքը կրել,  
Ոչ ոք իրաւունք Հային չի տուել . . .

Այժմ ինքնակալ Կայսրն բարեխնամ,  
Տալիս է իրաւունք կրել ինքնակամ.  
Ուրեմն անվրդով այդ գտած գանձդ,  
Վերցրու, պաշտպանէ Հայրենիքդ ու անձդ:

Վերցուր, գնա թշնամու առաջ,  
Ցոյց տուր հայութեան հողին ու սիրտ քաջ.  
Որ ամենքը տեսնեն անվահերութիւն,  
Ու ասեն. «Հայն էլ ունի քաջութիւն» . . .


ՅԱԿՈՎԲ ՂԱԶԱՐԵԱՆՅ



# ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

(Հայոց Պատմութիւնից)

## ՅԱԻԱԿԻՅ ԵՂԵԱՅՐ



Ջ.

Իհրանի զնալը եթէ ուրախաւիթ էր բոլորի համար, անհնարին կրօնի զատճառեց Ներսէհ Կամատաւանին. պարտից զօրքերի հետ Պարսկաստան էր զնում կալանաւոր Հրահատը, որին մի դառն վախճան էր սպասում Պերոզի աւաջ: Արդէն Ատոմը իմաց էր առել իշխանին Զարուհի տիկնոջ զբութիւնը: «Տիկինը խելքը կը կորցնէ», ասել էր Ատոմը վճռաբար. «գիշերները քուն չունի, միշտ լաց է լինում, ասում է՝ թողէք մի անգամ էլ տեսնեմ նրան և ապա տարէք»: Անքուն գիշերներ շատ էր անցկացրել և ինքը Ներսէհ իշխանը, մի այգպիսի եղբօր կորուստը գուցէ նա կարող կը լինէր մտքից զցել, եթէ չըլինէր հայոց փոքրաթիւ բանակը, որ մի օր չէր մոռանում Հրահատի անունը: Զինուորները միշտ պատմում էին նրա քաջազործութիւնները, գովում էին, և այդ բոլոր խօսքերը վերջացնում էին դառն ափսոսանքի ախ ու վաշտով: Ինքն սպարապետն էլ, որ մինչև այժմ ոչ մի թշուառութեան մէջ չէր ցոյց տուել տխուր դէմք, Միհրանի չուն լսելուց յետոյ խիստ չազուած էր երևում: Պարզ երևում էր, որ այդ սակաւախօս մարդը մտքով ողբում է իր քաջ նիդակակցի կորուստը: Յիրտի որ Հրահատի տեղը ոչ ոք չէր կարող բռնել:



Միհրանի ետևից հայոց զինուորները բռնեցին Գուլնի ճանապարհը: Այդ տեղափոխութեան ժամանակ մի օր Ներսէհ Կամսարականը իր չորս հաւատարիմ ծառաների հետ անհետացաւ Վահանի բանակից: Երկու օր դօրախումբն սպասեց նրա վերադարձին, բայց ի դուր: Ի՞նչ էր պատահել նրան, այդ ոչ ոք չըզիտէր: Վահանը ճարպահատեալ գլխաւոր շարունակեց ճանապարհը:

Սուրբ աշնանալին դիշեր է: Սաստիկ հեղեղը թափւում է սևաթուր ամպերից. դժոխալին թանձր խաւարը չի թոյլ տալիս ոչինչ բան տեսնել: Միայն Բաղրևանդ դաւառի Բաղաւան գիւղը տանող ճանապարհի վրայ վազող ձին է իմանում թէ ուր է գնում: Խեղօք կենդանին մինչև անգամ չի ընկնում մեծ լճակների մէջ, որոնք տնձրւելի ջրից են կաղմվել ճանապարհի խորաւորտ տեղերում: Նա վազում է, երբեմն կանգ է առնում և իր գլուխը դէս ու դէն ցցելով հոտառում է օդի մէջ: Ձիւն տէրը լուռ է, անշարժ. ամեն ինչ թողել է ձիւն կամքին: Եւ իր սեփական անձի մասին էլ շատ չի մտածում ձիաւորը. նրա վերաբերուն էլ բաւական կախ է ընկել ձիուց, նա կարծես չի զգում որ անձրևն զգալի կերպով վարարել է: Խոր ձորերից անընդհատ լսվում են ահեղագոչ հեղեղատների որոտոցները. ամեն մի առուակ գետ էր դառել և սպառնում էր կլանել ամեն ինչ, որ իր ճանկն ընկնի: Բայց ձիաւորը ուշ չի դարձնում դրանց վրայ: Նա չի դառում և ձիուն, որ յանկարծ փոխեց քալերը և սկսեց աւելի հանդարտ գնալ: Բնագրամմը հասկանալով որ դա առանց սրտճառի չէր, ձիաւորը յետ դցից գլխի ծածկոյր և անձրևի տարափի միջով տեսաւ հեռու կրակներ: Այդ աղօտ լոյսերը նրան հանդստութիւն տուին:

Կէս ժամից յետոյ ձիաւորը մտաւ Բաղաւան գիւղը, մի խրճիթի մօտ գնաց և դրսի դուռը ծեծեց: Իսկոյն դուռն վազեց մի երկտասարդ, որ ներս թողեց ձիաւորին:

—Ձին կապելու հնար տես, ասաց եկւորը, ժամանակ չը տալով անդամ որ իրան լաւ ճանաչէ տանից դուրս եկածը, որ իսկոյն բռնեց սանձը և ձին տարաւ գէպի մի կողմ:

Մտնելով մի բոլորովին թափուր սենեակ, եկւորը դէն ղցեց իր ջուր կտրած վերարկուն և կախ արաւ սլափից, որ ջրաքամուի:

Դա հերսէհ Կամսարականն էր:

—Խոչ լուր, Ատոմ, մի բան շինել ես, թէ արդէն ամեն ինչ վերջացել է, դարձաւ իշխանը գէպի նոյն երիտասարդը, որ ձին տեղաւորելուց յետոյ յետ դառաւ տուն: —Բանակը սրտեղ է:

—Մի քիչ բան եմ շինել, տէր իմ: Երէկ ես հատայ աչտեղ և իմացայ որ իշխանը այս մի զօրաբաժնի հետ է, որ ալժմ իջլանել է զիւղի մօտ և ոչ թէ այն բանակում, որ մնացել էր սարի միւս կողմում, ինչպէս դու էիր կարծել. ես ուզում էի յետ դառնալ և իմաց տալ...

—Կարճ կարիր, Ատոմ. զիւղացիներից ես էլ իմացայ, որ Միհրանը այս մի բանակումն է և նրա հետ են բոլոր զերիները. դու այն ասա թէ ինչ արիր:

—Պարսիկ զինուորի հազուտով մտայ բանակը. տեսայ իշխանին և մի յարմար ժամանակ ճարելով աչքերովս նշան արի, որ փախչելու պատրաստ լինի. դու զիտեօ որ իշխանը լաւ է հասկանում այդ նշանները...

—Դարձեալ հեռացար, ընդհատեց իշխանը խիստ ձայնով.—յետոյ ինչ է դառնում:

—Իրիկնապահին մի վրացի զերի կար ընկած ազրբի մօտ. խեղճին չուաններով պինդ կապուել էին զինուորները, իսկ իրանք մերձակայ այգում խումփում էին. ես վրացուն ազատեցի և փախցրի... բայց վերնահազուտը փոխեցի...

Ատոմը տեսնելով որ Կամսարականի աչքերը վառ-



վում են, յանկարծ փոխեց իր ոճը և շտապով ստաց.

— Կրա շորերն աչտեղ են, քեզ համար...

— Լաւ, հասկացայ. ուրեմն ես վրացի զերի կըգառնամ, իսկ դու պահապան պարսիկ զինուոր և այսպէս բանակ կըմտնենք:

— Այն:

— Իսկ աչտեղ մեր ձիաները կըպատրաստէ Ներսէսը, այնպէս չէ:

— Այն, և Վարդը:

— Մոռացւոր որ նա ինձ հետ չէր: Ես թողեցի նրան Ծածակաձորում, ուր նա կըսպասէ մեզ Վարշամի հետ:

— Քանի՞ ձի ունինք:

— Զորոր, տէր:

— Զորորդը լաւն է:

— Ես ինքս հաւանեցի և գնեցի:

— Ուրեմն շտապիր դնանք:

— Անձրեւ է, տէր:

— Ամենալաւ ժամանակ:

Կարճ միջոցում Ներսէսը հազաւ վրացու զգեստը, իսկ Ատոմը զինուորի գրահը. նրանք հեռացան տանից:

Անձրեւը այժմ այնքան յորդառատ չէր, բայց բարակ էր մաղում: Երկու հոգի ձեռներով գետինը շաշափելով ձորն իջան և համարեա մագլցելով ձորի ուղղաձիք կողը, սկսեցին դէպի վեր բարձրանալ: Այդ իսկ միջոցին ներքևի թփերի կողմից լավեց մի խլրտիւն, Ատոմը, որ աչտեղից մօտիկ էր, հանեց սուրը և կամենում էր թփի վրայ յարձակուիլ, բայց կանգ առաւ, լսելով թէ ինչպէս թփի քամակից մէկը ասաց հայերէն. «Անիճեալ անձրեւ... պահ մի դադարէիր...» Ատոմը շոշափելով բռնեց թուփը, իսկ նրա ետևից ոտների ու ձեռքերի վրայ սողալով գնաց Ներսէսը:

— Եթէ դաւաճաններից լինի, խնայել չըկայ, փրկուից փրկուի:

Խաւարի մէջ Ատոմը գլխով հաւանութեան նշան արտ., կարծես թէ իշխանը շատ էր տեսնում թէ ինչ կայ իր առջևը: Նա հանդարտ ձայնով հարցրեց. «Ո՞վ ես»:

Անճանօթը լսիւյն պատասխանեց թիկի ետևից բարկացած ձայնով.

—Անիծեա՛լ, սատանային տեսնէի այգքան չէի վախենալ, չէս կարողանում բարձր խօսել: Ես քեզ չեմ տեսնում:

—Ձայնդ հանաչում եմ, ասաց Ատոմը նոյն ցածր ձայնով.—Եթէ անասդ էլ իմանամ, շուտ կըսլծնենք այս տեղից:

—Լսիր ուրեմն, բայց իմաց որ ձեռիս սուր կայ: Ես Հրահատ Ասմասարականն եմ:

—Ձտապիր, տէր իմ, իջնել ձորը. ես Ատոմն եմ:

Ներսէհը ուրախութիւնից համարեա գլորուելով ընկաւ ձորի յատակը ջրի մէջ. և այդ լապէին էլ հաստն Ատոմն ու Հրահատը: Երկու եղբայրները այգալիսի սարսափելի դրութեան մէջ միմեանց գրկախօսւնեցին և համբուրուեցան: Ապա երեք հոգի ձեռք ձեռքի տուած առաջ դնացին. մեքենայաբար նրանք դտան ամենից լաւ ճանապարհը, հէնց այգտեղ էր ձորի սկիզբը, որ սկսվում էր մի տափարակի գաշտավայրից: Նրանք բարձրացան այնտեղով, ուսկից ձորն էր թափվում մի փոքրիկ առուակ, որ գոյացել էր տափարակի վրայ ժողովուած ջրից:

—Ես կարծում էի թէ մենակ պիտի կատարեմ այս գործը, խօսեց Հրահատը, երբ նրանք մօտ էին խրճիին.— Ատոմը միայն այն էր հասկացրել թէ պէտք է փախչել. ես չէի կարծում թէ դու էլ այստեղ ես, եղբայր:

—Ո՞վ էր տուել քեզ այն սուրը, որով սպառնում էիր Ատոմին, հարցրեց Ներսէհը:

Ատոմը շտապեց պատասխանել.

—Մոռացել էի յայտնել, որ իշխանի վրանի ետևում



բսած են մի քանի մացառներ. զրանց մէջ ես թողել էի մի սուր:

—Այո, ես այդ իմացայ այն ժամանակ, երբ դու վրանի առաջ նստած, վահանիդ վրայ ձեռքով մի սուր էիր նկարում և մի քանի անդամ մատդ գէպի մացառներն էիր տանում: Գիշերը պահապանս նիրհած ժամանակը ձեռս դուրս տարի վրանի տակովը, սուրը բռնեցի, քակեցի կապերս և դուրս եկայ: Վերջին օրերս Միհրանը այնքան խիտ չէր վարվում հետս. կարծում էր թէ այլևս փախչելու հնար չրկայ:

Նրանք մտան տնակը. ճրագի լոյսով միմեանց նայեցին, սարսափեցան. ամենից վատ էր Ներսէհի դրութիւնը. նա իսկոյն հանեց շորերը, կրկին հագաւ իր թրջած վերարկուն:

Գիւղի աքաղաղները նոր էին օլտել կանչել, երբ չորս ձիաւորներ հեռացան գիւղից աճապարանօք:



## ՓԱՌԱՀԵՂ ՎԻՐԱՒՈՐ

Է.

մեռն անցաւ:

Վահանը Գուլինի մէջ բաւական կազդուրուել էր իր մարդկանց հետ: Քանակցութիւնները նախարարներէց շատ կողմնակից որսալու համար շարունակ զբաղեցնում էին սպարապետին: Նրան վերջապէս յաջողութեց իր կողմը դրաւել երկու հզօր նախարարներ, որոնցից մէկն էր Որդի՝ Գիմաքսեան տոհմից, իսկ միւսը կոչվում էր Քաջաջ Սահառունի: Մի քանի ժամանակից ի վեր այդ երկուքը հիւր էին Գուլինում, ուր եկել էին սպարապետի և կաթողիկոսի հետ մանրամասն խորհրդածու-

Թիւններ անելու ապագայ գործունէութեան մասին:

Հաղիւ էր ձմեռային բուքը տեղի տուել մարտի արեգակի տաք ճառագայթներին, մի գուժկան հասաւ Գուլին, ու օձիքը պատռելով յայտնեց իշխաններին թէ Պարսից անհամար զօրքերը Երասխը տնցած՝ դիմում են դէպի Արտաշակ: Հետևեալ օրը մի ուրիշ գուժկան իմաց տուեց, որ Պարսից զօրքերի հետ են և ուրացեալ նախարարները, որոնք սպարապետի ուր լինելը իմացել են և կամենում են յանկարծակի պաշարել տալ Գուլինը և պատուհասել Վահանին ու իր կողմնակիցներին, Զօրքերի չուն խիստ շտապողական է, ասում էին, գուժկանները:

Կազմուեցաւ մի ժողով Յովհան կաթողիկոսի մօտ: Այդտեղ բացի Վահանից կային և Ներսէհ ու Հրաշատ եղբայրները, Որդի Դիմաքսեան, Քաջաջ Սահառունին և մի քանի քաղաքացի վաճառականներ: Կաթողիկոսը յայտնեց, որ իրանք շատ նեղ գրութեան մէջ են, զօրք ու օգնական չունին, այն ինչ թշնամին ահագին բազմութեամբ դիմում է իրանց վրայ: Վերջը հայրապետը սկսեց.

— Սակայն այս բոլորը ես չասացի, որ դուք վհատուիք, որդիք, այլ ձեր անելիքը վճռէք: Ձրլինի թէ մարդկային զօրքի բազմութիւնը ձեզ շուարեցնէ: Մեր Երկնային Վարդապետն իր օրինակով ցոյց տուեց, որ իր ճշմարիտ զինուորը անվախ պիտի դնայ ամեն տեսակ տանջանքի առաջ: Մահուան ստրուկներ ենք ամենքս, որդեակներ, բայց պարգերեւս քրիստոնեայի մահը ուրիշ բան է: Աշխատենք այդ մահը ձեռք բերել: Ահա ես էլ, տարիների ծանրութեան տակ խոնարհուած ծերունիս պատրաստ եմ ձեզ հետ լինել . . .

Բոլոր ժողովականները խիստ յուզուած էին հայրապետի այդ խօսքերի վրայ: Վահանը սկսեց խօսել.

— Քաջ զիտացէք, Վեհափառ Տէր և իմ արի նիզակակիցներ, որ Պարսից թշնամին մենք ենք միայն: Նը-



բանք զալիս են մեզ պատժելու, իսկ ժողովրդի հետ դորձ-  
չունին: Եթէ մեզպէսները չըլինին, ժողովրդի կողմից ո-  
չինչ ընդդիմութիւն չեն տեսնիլ պարսիկները: Լաւ քիշե-  
ցէք, որ դեռ Ատրնեքսէհը ունէր հրաման՝ բռնել մեզ և  
կենդանի տանել Պարսկաստան, բայց Ներսէհապատի ճա-  
կատամարտը խորտակեց նրա ցանկութիւնները: Այժմ նոյն  
հրամանով զալիս է, ինչպէս լսեցիք գուժկաններէց, Զար-  
միհը Հաղարաուխտ մեծ սպարապետը և նրան պիտի օ-  
ժանդակեն ուրացեալները: Ես կարծում եմ, որ եթէ մենք  
բոլորս կարողանանք ճողալրիլ մահից կամ անարդ գերու-  
թիւնից, պարսից բանակը ձեռնունայն պիտի մնայ:

Ամենքը հաւանեցին սպարապետի այդ միտքը, իսկ  
հրահատ Կամարականը հարցրեց, թէ ինչ կերպով կարող  
էին բոլոր միաբան նախարարները ազատուիլ պարսից սը-  
րերէց:

— Խոհեմութիւնը պահանջում է, որ թողնենք Գուի-  
նը, պատասխանեց Վահանը, — և թողնենք այնպէս որ  
մեզանից և մեր ընտանիքներէց ոչ ոք չըմնայ աշտեղ:  
Մեր վեհափառ հայրն էլ պիտի հետևէ մեզ, լաւ իմանա-  
լով որ ինքն էլ նոյնպէս թշնամի է պարսիկներին, որ-  
պէս մեր խորհրդատուն և մեզ ղեկավարողը: Մենք դուրս  
դնանք քաղաքից, թող այնուհետև Հաղարաուխտը հա-  
լածէ մեզ և եթէ կարողանայ՝ բռնէ:

Յովհան կաթողիկոսը ուրախութեամբ չափսեց, որ  
ինքը կըզնայ ամենքի առաջ. նախարարներն էլ ընդունե-  
ցին այդ վճիռը: Բայց քաղաքացիներէց մէկը, Թադէոս  
անունով, ընդդիմացաւ:

— Դուք կըհեռանաք, ասաց նա, բայց ո՞վ կըհաւա-  
տացնէ պարսիկներին, թէ Գուինի մէջ չըկայ մի հատ ձեր  
կողմնակից: Ընդհակառակը, ձեր ղեալուց լետոյ նրանք  
պիտի խուզարկեն ամեն մի տուն՝ ձեզանից մէկին գտնե-  
լու համար: Քաղաքը կըվնասուի:

—Դաւ խօսք է, յարեց Ներսէ՛հ Կամսարականը,—  
մտածենք թէ ինչ ենք կարող անել:

—Մի Հնար կայ միայն, ասաց Վահանը.— քանի որ  
քաղաքը շրջապատած չէ, հեռացրէք ձեր բնտանիքները  
Վեհափառի հետ: Իսկ մենք, պատերազմող մարդիկս, կը-  
սպասենք, երբ սլարսիկները կը պաշարեն, պատերազմով  
դուրս կը գնանք նրանց առաջը. եթէ կարողանանք՝ կը ճեղ-  
քենք նրանց շարքերը, եթէ ոչ՝ կը նկինք ուր ի ձեռին:

—Դա չընշանակեց պարսից սրերից ազատուիլ, որի  
մասին դուք խօսեցիք ուղբում, Վահան սպարապետ, ա-  
սաց Քաջաջ Սահառունին, որ մինչև այդ ժամանակ լուռ էր:

—Մի՛թէ ազատուել նշանակում է անպատճառ ապ-  
րել. և մի՛թէ ապրելը կամ մեռնելը մեր ձեռքին է: Ի՞նչ  
լիս սպարապետ՝ իմ կամքն այսպէս է:

—Իրաւունք չունինք ընդգլխմանալ ձեր կամքին, խօ-  
սեցին ամենքը և գնացին պատրաստուելու:

Նոյն գիշերը Ներսէ՛հ և Հրահատ Կամսարականները  
պատրաստում էին իրանց բնտանիքները ճանապարհ դը-  
նելու: Ներսէ՛հի սրդիքը բարեբախտաբար այդ միջոցին  
գտնվում էին Ջիբակայ ղիւղերից մէկում և Դուխում մը-  
նացել էր միայն նրա կինը: Իսկ Հրահատը Խորէնից յե-  
տոյ անգաւակ էր: Տնային աւելորդ իրեղէնները սլահ  
տուն դրացիներին:

Այն գիշերին Կամսարականները հրաւիրուեցան ուղի-  
սապետի մօտ, ուր կային միւս իշխանները և ժողովրդի  
բազմութիւնը: Վահանը մաս-մաս բաժանեց ամբոխը և  
լուրաքանչիւր մասը յանձնելով մի իշխանի, պատուիրեց  
ամրացնել Դուխնի բերդը: Այդ աշխատանքով իշխանները  
ղբաղուած էին մինչև միւս օրուայ արեւածագը:

Հէնց նոր էին վերջացրել գործը և յետ էին գառ-  
նում դէպի տուն, երբ աշտարակների սլահապաններից մէ-  
կը վազէ-վազ հասաւ և յայտնեց Հրահատ իշխանին, որ



Ջրվեժ կոչուած տեղի մօտ նկատելի են սպառազէն մար-  
դիկ, որոնց խմբերը հետզհետէ ստուարանում են: Հրա-  
հատը շտապեց գէտլի աշտարակը:

Մի երկու-երեք ժամից յետոյ սպարապետն արդէն դի-  
տէր, որ խոսրովակերտից մինչև Ջրվեժը կանդնած են պար-  
սից զօրքերը: Ամեն ինչ վերջացել էր. պէտք էր աչժմ ուրիշ  
կերպ գործել: Սպարապետը շուտով որոշեց իր անելիքը:

Նա հրամայեց բոլորին պատրաստ լինել: Ինքը շտա-  
պեց մայր եկեղեցու բակը, ուր մի ջերմեռանդ աղօթք ա-  
նելուց յետոյ ձի նստաւ: Այդ ժամանակ կաթողիկոսի սպա-  
սաւորը լուր բերաւ Վահանին, թէ չընայած որ պարսիկ-  
ների զօրքը պաշարել է քաղաքը և սպարապետի կար-  
գադրութիւնը փոխուել է, բայց վեհափառը պատրաստ-  
վում է զինուորներին հետ դուրս գնալ քաղաքից: Վահա-  
նը գնաց կաթողիկոսի մօտ:

Ոչինչ չէր ուզում լսել Մանգակունին. սպարապետի  
համադեցուցիչ խօսքերը աղարկիւն տնցան:

— Ես իբրև հովուապետ չեմ թողնիլ որ Քրիստոսի  
զինուորները առանց հոգևոր առաջնորդի գնան իրանց  
անձր պատարագելու: Ես էլ ուզում եմ մատնակից դառ-  
նալ նրանց փառքին: Եւ բացի դրանից գիտեմ որ եթէ  
անձիս պաշտպանութեան համար այստեղ մնամ, քաղաքս  
պիտի մարանեմ արիւնըռուշտ թշնամու բարբարոսութեա-  
նը: Լաւ լիշիւր որ Միհրանը Տալոց աշխարհից ուզում էր  
զալ այստեղ ինձ կալանաւորելու: Այժմ էլ այդ նպատակը  
չի մոռացուել: Ո՛հ, ես ինչ հովիւ կրլինեմ, թէ իմ հօտի  
բարօրութեան համար անձս զոհել չըգիտենամ:

Վահան սպարապետը այդ խօսքերին պատասխան չը  
գտաւ և դուրս գնաց:

— Գնա պատրաստիւր ամենքին, ես էլ շուտով կըղամ,  
ասաց նրան Հայրապետը:

Կէսօրից անց էր, երբ մէկ-մէկ սկսեցին հաւաքուել

ձիաւորները: Ամենից առաջ հասաւ մի սպառազէն երիտասարդ, որի դէմքի վրայ մի հատ մազ չըկար: Նա արիարար առաջ քշեց ձին և շնորհքով դլուխ տուաւ սպարապետին: Վահանը դարմացած էր:

—Մեր խմբի մէջ քեզ պէս զինուոր տուաջին անդամն եմ տեսնում, ասաց նա.—ինչպէս յանկարծ ընկար մեր մէջ: Խորհուրդ չէի տալ այդպէս փստահ լինել զէնքերիդ վրայ, ընկեր. դէմքդ ցոյց է տալիս, որ սաղաւարտ առաջին անգամն է տեսնում դուիսդ:

—Այո, տէր, պատասխանեց ձիաւորը, առաջին անդամն է որ վահան ու կարարձ եմ կրում:

Սպարապետը մի. քանի վայրկեան ուշադրութեամբ զննեց զինուորի դէմքը և ասաւ թէ համարձակ ասաց.

—Իշխանուհի Ասմարական, սպառազինուած... Ընչ եմ տեսնում, արիկին:

—Դուք լաւ ճանաչեցիք, Վահան սպարապետ, պատասխանեց նա ծիծաղելով:

Ձիաւորը Հրահատ իշխանի ամուսինն էր:

—Չարիզանց երկիւղալի խաղ էք խաղում, խօսեց սպարապետը գծգռութեամբ:

—Չատ շատ այդ խաղը կրվերջանայ մահով. Ընչ արած, իշխան, թէև կին ենք, բայց չեմ կործում որ մեր դառամեալ վեհափառից էլ տկար լինինք: Բացի դրանից ձեր կարգադրութիւնը . . .

—Իմ կարգադրութիւնը փոխուած է, քաղաքը սաշարուելուց յետոյ ես չէի ուզիլ որ դուք մեզ հետ վտանգի ենթարկուէիք:

—Բայց Ընչ վտանգ կայ, Վահան իշխան. իմ ամուսինը պիտի զնայ պատերազմէ, ով զիտէ մեռնի կամ գերի ընկնի և ես նրանից յետոյ դարձեալ կեանք վարեմ: Ոչ, տէր, թող առէք որ մենք էլ մեր կեանքը սղատ սլահենք: Իմ կամքն է մեռնել միատեղ, սպրեւ միատեղ:



—Բայց ո՞ւր է իշխանը, հարցրեց Վահանը, դարձեալ ոչինչ չունենալով պատասխանել տիկնոջը, ինչպէս կաթողիկոսին:

—Նա չի ուշանալ, պատասխանեց Զարուհի տիկինը.— վերջին կարգադրութիւններն անում է ծառաներին: Մենք երեք հոգի ենք, զիտէք:

—Երեւի միւսն էլ Սահականոյշ տիկինն է:

—Այո՛, իսկ երրորդը կըլինի Առոմի ամուսինը:

Մինչդեռ այդ խօսակցութիւնը անցնում էր նրանց մէջ, ժողովուեցան զինուորների մեծ մասը. եկան Դիմաքսեանը, Սահառունին և դրանց ետեւից դուրս ելաւ Յովհան կաթողիկոսը: Վերջինս սպասաւոր չունէր իր հետ, ինքն էլ հագնուած էր մի հասարակ վարդապետի պէս: Ամենից յետոյ հասաւ Ներսէհը, Սահականոյշ տիկինը և Առոմը իր ամուսնու հետ: Վահանը մօտեցաւ կաթողիկոսին և դադարի նրան մի ինչ սր բան յայտնեց: Հայրապետը չուզուած սրտով ժողովեց ամենքին, մի սրտառուչ աղօթքով օրհնեց զինուորներին: Նրա ձայնը դադում էր, իսկ աղօթքը կիսած ժամանակը տեսնելով երեք տիկիններին, որոնք խորին ակնածութեամբ լսում էին աղօթքը կորացրած գլուխներով, հայրապետը չըկարողացաւ զսպել իր արտասուքը. երկու խոշոր կաթիլներ դիտուեցան նրա չոր աչտերով և անչայտացան ձիւնի պէս սպիտակ միւրուքի մէջ: Զուտով նա լռեց:

—Սրտապինդ լինինք, քաջալերեց սպարապետը առաջ դուրս գալով.— ծանր է մեր դրութեւնը, բայց Երկրնքի տէրը տեսնում է մեզ: Ներսէհ իշխան, եղբօրդ և հրեք տիկնանց հետ դնա, մեր զինուորներից էլ մի լիսուն հատ վերցրու. նրանց պաշտպանութեան համար, Դուք, վեհափառ հայր, ինչպէս կըկամենաք լինել:

Որդի Դիմաքսեանը և Քաջաջ Սահառունին խորհրդեցին սր հայրապետին իրանց յանձնէ:

—Թող այդպէս լինի: Դէ՛հ, զնանք խաղաղութեամբ:

Խումբը շարժուեցաւ: Ժողովուրդը, որ մեծ բազմութեամբ շրջապատել էր կաթողիկոսին, թախանձագին խնդրում էր մնալ: Բայց Յովհանն օրհնելով ամենքին քշում էր իր ձին: Զուտով նրանք քաղաքի դռների մօտ էին:

Սպարապետը առաջ դնաց, սլատուիրելով միւսներին խումբ-խումբ յարձակուել զանազան կողմերի վրայ և շրջիտել թշնամուն:

Կարճ միջոց անցած՝ պարսից շարքերը խառնուեցան. բարձրացան վայրենի աղաղակներ, հրամայում էին ոչոքին բաց չթողնել, բոլորին բռնել կամ սպանել: Սպարապետը մըրիկի պէս անցաւ շարքերի մէջ, աջ ու ձախ դիակներ փռելով. նրան հետևում էին սուսերամերկ թիկնապահները, արեւն թափելով: Մինչդեռ պարսիկները մի տեղ էին ժողովվում անքակտելի պարիսպ կազմելու համար, վրայ հասաւ Հրահատ Կամսարականը և ահեղաբար գոռալով, նիզակը ճոճելով, սլացաւ գօրքի մէջ. նրա օրինակին հետեւեց Ներսէ՛հը Ատոմի և միւսների հետ: Յարձակումն այնպէս սաստիկ էր և անակնկալ, որ շուտրած պարսիկները շփոթուեցան, աջ ու ձախ փախան, մեծաթիւ դիակներ տալով հայոց սուրերին: Վահանի և Կամսարականի խմբերը անցան անվտանգ և աշտանակեցին երիվարները:

Այսպէս բախտաւոր չեղաւ Հայրապետի խումբը: Մօտենալով պարսիկներին, Դիմաքսեանը և Սահառունին ահադին աղաղակներով շարքերի մէջ խուժեցին, կամենալով ճանապարհ բանալ կաթողիկոսի առաջ, որ զինուորներով շրջապատուած՝ հետևում էր երկու քաջերին: Երկար չըտևեց պարսիկների ընդդիմադրութիւնը: Կախարարների սրերը մեծ կոտորած արին, պարսիկները սկսեցին նախանձել: Բայց այդ րոպէին օգնութեան հասաւ ուրացեալ Դիւհանը. մարտը ոտտկացաւ: Միւսեցի դաւաճանի սուրը խոր ծակեց Քաջաջի զրահը կրծքի վրայ և նա ըն-



կաւ, իսկ Դիմաքսեանը նիդակախոց տապալուեցաւ նոյն միջոցին, երբ նա կաթողիկոսի ձիու սանձը բռնած, առաջ էր ուղում անցնել: Վայրագ պարսիկներէց մէկի փքինը ծակեց կաթողիկոսի թիկունքը. յորդ արիւնը ցայտեց վէրքից և որովհետեւ նրա ձիու կողքումն էլ մի նիդակ էր խրվել, ուստի պատկառելի ծերունին ծանր կերպով գետին ընկաւ, ինչպէս մի մեծ կաղնեայ կոճղ: Նրա դիակի մօտ կոտորուեցան քսանի չափ հայ զինուորներ:

Կռււր վերջացրեց երեկոյեան մութը: Զինուորները թողին վաշտը և Զարմիհը Հագարաւուխտը իսկոյն հրաման արձակեց Վահանի ետեւից ընկնել: Բանակը սաստիկ հապճեպով ուղի ընկաւ դէպի Հիւսիս-արեւմուտք: Բայց երկար չըտևեց այդ արշաւանքը: խաւարը ոտիպեց զօրքին բանակ կազմել առաջին պատահած դիւղում:

Դիշեր է: Մութ ու պարզ երկինքը իր անհամար աստղերով նայում է աշխարհին: Հանդարտ է բնութիւնը. անվրդով քաղցր է խաղաղ մարդկանց քունը: Ոչ ոք չը գիտէր թէ ինչ տեսարան էր ներկայացնում Դուլինի ճակատամարտի տեղը: Հանգիստ են արին. թափողները, քունը հանգստացրել է և նրանց, որոնց որդիները կամ հայրերը կամ սիրելի ազգականները գետնատարած ընկած են երկնքի տակ: Սոսկալի էր այդ օրուայ պատերազմի հետևանքը: Միմեանց վրայ թափուած դիակները արնաքամ էին լինում. մերթ ընդ մերթ մսի կոշտերի տակից լսվում էր թույլ օրհասական մրմունջը, որ այդ մեռելոտների վրայ թագաւորող լուսթեան մէջ տարածվում էր իբրև մի շշուկ, որ ամբոխի խօսակցութեան էր նման: Խոսքովակերտի անտառում հաւաքուել էին զայլերը, պատրաստվում էին առատ ընթրիք վայելել մարդկանց այդ դիակների վրայ:

Յովհան կաթողիկոսը ընկած էր Դիմաքսեանի մօտ, մէջքի վրայ: Նրա սպիտակ փառահեղ մկրուքը արիւնա-

լուայ էր դառել, գլուխը թեքվել էր դէպի մի կողմ և այդ դրութեան մէջ արտայայտում էր մի անուհման հեղութիւն. ջախջախուած վեղարը ընկած էր նրա թևի տակ: Անշարժ է հայրապետը, կեանքի նշույններ չեն երևում: Նա ուրեմն վախճանուի՞լ է. ի՞նչ իմանաւ: Միթէ այդ է նրա վերջին հանգստեան տեղը:—Ո՛չ, նա, մի ամբողջ ազգի միլիթարութիւնը, զթառատ հայրը բեհեզների վրայ պիտի հոգի տայ: Ո՞վ պիտի օգնէ նրան, ո՞վ պիտի ազատէ գայլի կերակուր դառնալուց:

Կարծես այդ ամենի մասին մտածում է և թանձր խաւարի միջով նայող Մարտը: Ահա նա իր սովորական անհանգիստ վարքով վերկայրեց մի ցուրտ քամի: Միևնոյն ժամանակ արևելքը սկսեց լուսաւորուել. լուսինը պատրաստվում էր իր կէսգիշերային ճանապարհորդութիւնը կատարելու: Քամին մի քանի անգամ դաշտի մի ծայրից մինչև միւսը վազելուց և լետ դառնալուց լետոյ գիակներից մէկը շարժվեց: Հայրապետն էր դա, որին արթնացրել էր զով քամին: Չատ չըջարչարուեց նա ոռքի կանգնելու համար: Քիչ ժամանակ մնաց կանգնած, կարծես կամենալով լաւ կշռել, թէ կրկին ընկնէ՞ն է լաւ թէ առաջ գնալը: Քայց գնալը հեշտ բան չէր: Մի քանի քայլ գնալուց լետոյ վերաւորը ընկաւ մի դիակոյտի վրայ, ծանր կերպով հառաչեց և կրկին կանգնեց և դողդողալով առաջ գնաց: Զառամեալ ծերունին դողում էր ցրտից. օծեալ մազերը քամին ցրվել էր ճակատի վրայ, ծածկելով աչքերը, և նա ոյժ չունի որ ազատէ աչքերը, որ կարողանայ սլարզ տեսնել լուսնի թույլ լուսաւորուած դաշտը: Այսպէս տատանուելով, խարխալելով, նա երկար դնաց. լուսաբացին քաղաքացիք գտան նրան ուժաթափ ընկած այն տեղը, ուր աղքատները նստում էին ողորմութիւն հաւաքելու:

Կէսօրից մօտ մի յուսահատ ձիաւոր զինուոր հասաւ



քաղաքը և ամեն մի պատահած մարդուն հարց ու փորձ էր անում կաթողիկոսի մասին:

Դա Ատոմն էր, որ շարունակ որոնում էր հայրապետին և նրա ուղեկիցներին:

Նրան ուղարկել էր Վահան Մամիկոնեանը:



## Ե Կ Ո Ւ Գ Ե Ր Ի

Ը.

Արմինը Հազարաուխտ սպարապետը անխոնջ հալածեց Վահանին մինչև Տայոց աշխարհի Ոքաղէ գաւառը, բայց չըկարողացաւ և մի հատ հայ զինուոր բռնել: Այդ անյաջողութեան վրայ զրայրացած պարսիկը սկսեց վրէժ հանել խաղաղ զիւղականներէց. քանզի շատ գիւղեր, կոտորեց բազմաթիւ հայեր: Բայց շուտով նա գտաւ մի բան, որ շատ ուրախացրեց նրա սիրտը:

Լսելով թէ Վահանը թաքնուել է Ղաղազում գտաւուի Վարալովարոյ կոչուած ամրութեան մէջ, որ գտնվում էր Յունաց բաժնում\*), Հազարաուխտը առաջ քաշեց իր զօրքերը և պաշարեց այդ ամրոցը: Բայց այդտեղ չէր Վահանը: Նրա տեղ պարսիկները կալանաւորեցին Սահականոյշ և Ջարուհի տիկիններին, որոնք բերդում էին մնացել իբրեւ մի անվտանգ տեղ: Մեծ էր Հազարաուխտի ուրախութիւնը. նա զիտէր որ գոնէ այդ զերէնների շնորհիւ զինաթափ կանէ Վահանի քաջ նիղակալիցներին, ներ-

\*) Հայաստանը այդ ժամանակ երկու մասերի էր բաժանուած, որոնցից մէկը պարսիկներին էր պատկանում, միւսը յոյներին:

ոէ՛հ և Հրահատ Կամսարականներին և կըհարկադրէ նը-  
րանց իր կողմն անցնել: Ուստի Հրամայեց որ երկու տի-  
կիններին պատուով պաՀեն: Գերի տիկինները անվախ Հե-  
տևեցին պարսիկ բանակին, որ իջաւ Բասեան գաւառը.  
նրանք Հաստատ վճռել էին իրանց ամուսինների պէս  
քրիստոնէական Հաւատարմութեամբ մեռնել և ոչ երբէք  
անարգուել Հեթանոսների ձեռքին:

Բասենում Զարմիհր Հաղարաւուխտը Պերողից Հրա-  
ման ստացաւ շուտով Հայոց աշխարհի մարդպանութիւնը  
յանձնել Միհրանեան ՂապուՀ պարսկին և փութով գնալ  
Վրաստան, թէ Հնար լինի. սպանել Վախութանդին: Ինքը  
Պերողը պատերազմ էր սկսել Հոների դէմ և գնում էր դէ-  
պի նրանց աշխարհը:

ՂապուՀ մարդպանն էլ ոչինչ չըկարողացաւ անել:  
Գերի տիկիններին թողեց Բասենու Ռողբերդ ամրոցում Վըշ-  
նասպ բերդակալի Հսկողութեան ներքոյ. և ինքը մարդ  
ուղարկեց Կամսարական եղբայրների մօտ, պատուիրելով  
ասել, որ նրանց կանայքը բանտարկուած են, թէ ուզում  
են որ նրանց արձակէ, պիտի թողեն Վահանին և Հան-  
գիստ ապրեն իրանց ընտանիքների հետ: Իսկ եթէ կարո-  
ղանան Վահանին սպանել, մեծ պարգևներ կըստանան  
Պարսից գոնից: ՂապուՀ երգմամբ Հաւատացնում էր որ  
երկու եղբայրները ազատ կըլինին մնալ միշտ քրիստոնեայ:

Կամսարականները սկզբում գանազան խոստումներով  
խաբեցին մարդպանին: Բայց վերջը ՂապուՀի մարդիկ յայտ-  
նեցին նրան իշխանների կողմից մի այսպիսի պատասխան.

«Բալոր խոստումներդ սուտ են, ՂապուՀ Միհրանեան.  
մենք լաւ գիտենք, դու ի՞նչ միշտ գիտես, որ սուտ ես ա-  
սում: Մեր կնիկներով մեզ չես վախեցնիլ: Մենք չարչար-  
վում ենք մեր Հաւատի Համար. մեր դորձն ու աշխատու-  
թիւնը աշխարհալին վայելչութեան Համար չէ, ոչ կնոջ  
և ոչ որդու Համար: Յաւիտենական երջանկութիւնը ժա-



ռանգելու համար կանանց էլ կարող ենք դէն անել, որ-  
դիներին էլ: Մի կարծիր թէ կրնաբուենք: Եթէ խոստ-  
մունքները մեզ համար դին ունենային, այսքան չէինք  
տանջուիլ, այլ ուրիշ վատերի պէս առերես մոխիր կը պաշ-  
տէինք, որ ձեր պարզւները շռայլենք: Աստուած ողոր-  
մած է. եթէ մեր կանանց կենդանի չըտեսնենք, միւս  
կեանքում դու չես կարող միմեանցից բաժանել»:

Այդ կտրուկ պատասխանն էլ Ջապուհի կարծիքը չը-  
փոխեց: Դրանից յետոյ էլ նա դեռ հաւատում էր թէ  
Կամսարականները կրնիճուին, մանաւանդ որ տիկիներն  
էլ խաբել էին նրան, ասելով թէ իրանց ամուսիններին  
պիտի համոզեն կատարել մարդպանի կամքը: Ջապուհը  
թողեց նրանց նոյն բերդում և իր դօրքերով սկսեց ան-  
հանդիստ անել Վահանին: Իսկ սա տեսնելով որ մի տե-  
ղից օգնութիւն չըկայ, քաշուեց Տարօն, ուր յայտ ունէր  
Հաշտենից գաւառի ժողովուրդը իր կողմը դրաւ: Ջապու-  
հը չորս հազար մարդիկներով դնաց նրա ետեւից:

Յուլիսի մի տօթագին օր Կարնոյ գաւառի Արծաթի  
անունով զիւղից քիչ հեռու մի հեղեղատի մօտ, ծառերի  
տակ նստած էին մի խումբ մարդիկ, թւով քսանից կամ  
երեսունից ոչ աւել: Հեռու ճանապարհից վառուակած, նը-  
րանք հանել էին իրանց մախաղները և անուշ կրծում  
էին զինուորական աղքատիկ պարէնը, միւսնոյն ժամանակ  
մտիկ էին տալիս հնձաւորներին, որոնք ճանապարհի միւս  
կողմում արտի մէջ բանում էին: Խմբի գլխաւորն էր Ներ-  
սէհ Կամսարականը, որ հանդարտ խօսում էր իր մօտ նըս-  
տած մի հաստակազմ ու թաւամաղ լեռնացու հետ: Վեր-  
ջինս նոր էր միացել այդ խմբին և կրում էր խուրս ա-  
նունը. բայց նա աւելի յայտնի էր իր գաւառի անունով.  
ամենքը նրան Արշամունի էին կոչում: Խօսակցութիւնը  
առժամանակ մոռացնել էր տուել նրանց առջևը դրած

Հայն ու պանիրը. երբեմն միայն նրանք ծծում էին փոքրիկ նեղարեւան կաւէ դոյլի ջուրը և զովանալով պատմում էին ախորժանօք:

Կամսարականի այս խումբը մի քանի օր դրանից առաջ բաժանուել էր Վահանի խմբից և կորցրել էր ճանապարհը: Այժմ օրուայ տապից զովանալով այդ ստուերախիտ տեղում, մտադիր էր արեղակը քիչ գէպի արեւմուտք թեքվելուն պէս ճանապարհ ընկնել, որոնել սպարապետին:

Յանկարծ Արշամունին ընդհատեց իր խօսքը և ձեռքով ցոյց տուեց Կամսարականին մի խումբ զինավառ մարդիկ, որոնք բարձրից դալիս էին արտի մեծ ճանապարհով:

— Դրանք պարսիկներ են, աւելացրեց Խուրոր:

Այդ ձիաւորներից մէկը կանչեց մի Հնձաւորին ճանապարհի մօտ և հարցրեց թէ արդեօք չի իմանում նա Վահանի տեղը:

Իււղացին պտտասխանեց թէ չըզխտէ:

— Անպիտան անարիներ, գոչեց պարսիկը, — բաւական չէ որ մի ապստամբին թաքցնում էք ձեր տներում, դեռ չէք էլ ուզում քաջ արքայի զօրականներին ուղիղ ճանապարհ ցոյց տալ:

— Մենք գործ չունինք պատերազմի և ապստամբութեան հետ, ինչպէս դուք գործ չունէք մեր անպիտանութեան հետ. եթէ զօրականներ էք, կարող էք գտնել, թէև Վահանին ճանաչողը լիմար պիտի լինի, որ նրա ետեւից ման գայ:

Պարսիկը հանեց սուրը և լարձակուեց մշտիկ վրայ. նա փախաւ դիւղի ճանապարհով, իսկ պարսիկը նրա ետեւից ընկաւ:

Արշամունին, որ տեղից կանգնած մտիկ էր տալիս այդ տեսարանին, բացագանչեց.



—Եթէ պարսիկը սպանէ մշակին, Աստուած նրա արիւնը մեղանից կը պահանջէ:

Եւ նա անհետացաւ:

Ներսէհ Կամսարականը վերկացաւ և տեսաւ, թէ ինչպէս խուրը նիզակով շամփրեց պարսիկին, որ հասուէհաս էր մշակին: Նրա գիւսիկը ճանապարհի փոշիների մէջ ընկաւ:


Այդ որ տեսան միւս պարսիկները, արշաւեցին Արշամունու վրայ: Գարանամուտ հայերը մի ականթարթում գուրս թռան ծառերի տակից, անուշադիր թողելով իրանց ճաշը: Մի փոքրիկ ճակատամարտ կազմուեցաւ: Հընձաւոր մշակներն էլ միացան Ներսէհի խմբի հետ իրանց ահագին մահալներով: Մի կարճ միջոցում պարսիկները սարսափահար փախուտական դարձան, թողնելով այդտեղ մօտ եօթանասուն և երկու դիակ: Կամսարականը հրամայեց շտապով դուրս բերել ձիաները հեղեղատի ձորից: Ձի հեծնելը, կազմուել-պատրաստուելը ըսպէի դորձ էր: Նըրանք թռան փախչողների ետևից:

Գիշերից բաւականին անցել էր, երբ հալածողների խումբը անվտանգ յետ դարձաւ Արծաթի գիւղը, այդտեղ գիշերեց և միւս օրը ճանապարհ ընկաւ դէպի Արշամունեաց գաւառը, ուր յոյս ունէր գտնել Վահանին: Եւ գտաւ:

Ա. ԲԱԲԱՆԱՆԵԱՆ

(Կը շարունակուի)





## ՄԱՆԻՍԻ

Ուաւօտը վաղ՝ մի խեղճ պատանի  
Վազում է շուտով՝ հասնում գործարան.  
Մինչև երեկոյ՝ առանց մի կանգի,  
Չարհարվում, գործում, անում ինչ կրտան:

Աղբիւրի նման քրտինք է թափում,  
Պատանի հասակը այդպիսով մաշում.  
Ժամերն էլ կարծես շատ են երկարում,  
Հանգստեան ժամը ուշ է մօտենում:

Մնունդը միայն մի պատառ չոր հաց,  
Կարօտ հիւթալի մի կերակուրի.  
Անկողինը չոր, տունը խոնաւ, թաց,  
Մարմինն զգում է դողոց սառսուռի:

Իւր տիրոջ աչքին դիւր գալու համար,  
Աշխատում էր նա՝ որքան էլ ոյժ կար.  
Բայց նրա ջանքը զուր էր, աննպաստ,  
Բոլորը մին էր, թէ «ԲԱՐԱԿ», թէ «ՀԱՍՏ» . . .

Յ. ՂԱԶԱՐՆԱՆՅ.





ԱՆԿՈՉ ՀԻՒՐԵՐ



## ՏԻՐՕԼՑԻ ԱՂԶԻԿԸ

(Ժողովրդական աւանդութիւնն Ղիկիէնսից)



օգէնի լիճը չորս կողմից շրջապատուած է ժայռոտ տարերւոյ. նրա կապուտակ ջրի հայելու մէջ ցոլանում են սլաճառ առտղերը և սահում է ամեն մի սմալ, որ երերվում է երկնքումը:

Աէս գիշեր է: Երկինքը նայում է ջրի հայելու մէջ, նայում է քնած քաղաքի, գեղեցիկ Բրէդէնց քաղաքի վրայ, որ փռւած է լճի մօտ, Տիրօլի կողմի ափին: Այս մի հին քաղաք է. հազար տարի է նա կանգնած է լճի ափին:

Անյիշատակ ժամանակներից նրա բերդերի և պարիսպների ստուերները հովանաւորում են տպաւածուտ սարերի ծալքերը: Քոյսր այդ քաղաքին մօտիկ ապրողները գետնն այն աւանդութիւնը, թէ ինչպէս 300 տարի առաջ՝ մի գիշեր վրկուեցաւ Բրէդէնցը:

Ապրուտ ճարելու համար իր հայրենիքիցն ու ազգականներիցը հեռացաւ մի տիրօլցի ազջիկ. նա գնաց Զուլցերլայի հովիտները, աղախին դարձաւ այնտեղ, և տարէցտարի նուազում էր նրա սրտում հայրենիքի յիշատակը:

Նա ծառայում էր մի բարի ընտանիքում, նա աշխատասէր և հաւատարիմ ծառայ էր. ընտելացաւ զուկ-



ցերիացոց, որոնք նրա համար ազգականներ դարձան, և երբ նա իր ոչխարներն արածեցնելու էր տանում, էլ չէր նայում այն կողմը, ուր Ֆրէզէնց քաղաքն էր:

Նա էլ չի լիշում հառաչելով Ֆրէզէնցը—Տիրօլը, ականջ չի դնում աւստրիական կռիւների ու արշանքների մասին հասնող լուրերին, և աւելի ու աւելի հանգիստ դարձնում է նա ամեն առաւօտ իր նոր հայրենիքի կրտուրի տակ: Այսպէս անցնում էին նրա օրերը Զուլցբերիայի խաղաղ հովիտներում:

Յանկարծ երևեցան մօտալուտ պատերազմի սոսկալի նշանները: Ոսկէ արտը մնաց առանց հնձելու. զուլցբերիացիք անդադար հաւաքվում են և տաք-տաք խօսում են միմեանց հետ:

Տղամարդիկ մտախոհ են և մռայլ. նրանց խիստ հալեացքը գետին է խոնարհած. կանայք անհանգստութեամբ զրոյց էին անում իրար հետ,—ոչ թե մանելու և ոչ կտաւ գործելու մասին են մտածում. երեխայքն էլ վախենում են գնալ դաշտ խաղալու:

Ահա բոլոր ժողովուրդը հաւաքվում է դաշտումը. մերձակալ քաղաքից մի քանի անձանցով մարդիկ գալիս են նրանց մօտ: Նրանք տաք-տաք խօսում են միմեանց հետ, անհանգիստ կերպով նայում են լճի կողմը:

Երեկոյին դարձեալ հաւաքուեցան: Կասկածն ու երկիւղը հեռացաւ նրանցից. նրանց բարձրաձայն խօսակցութիւնը լսվում է բոլոր լճափում:

Տանուտէրը վերկացաւ, բաժակը ձեռքին, և բարձր բացաղանջեց.

—Խմենք այս բաժակը, կորսնստ մաղթենք մեր անիծուած թշնամուն:

—Ահա զիշերը մօտ է, և վաղը, երբ լոյսը բացուի, մեր թշնամիների Ֆրէզէնց բերդը արդէն մեր ձեռքին կը լինի:

Կանանց երեսին կարծես զրաժ է երկիւղ և հպարտութիւն. Տիրօլցի աղջկայ սիրտը դուրս ընկաւ:

Տեսնում է նա հեռուում իր գեղեցիկ հայրենի Բրէզէնցը և նրա աշտարակները. նա միայն այստեղ ընկեր չունի, շրջապատուած է թշնամիներով: Նրա սրտումը զարթեցաւ իր մանկութեան տարիների յիշողութիւնը. յիշում է ծանօթ երեսներ, որոնցից նա հեռացել է մի կտոր հացի համար, նրա ականջին հնչում են հայրենի, Տիրօլի, լեռնային երգերը:

Նա ոչինչ չի լսում, թէպէտ հեռուից վայրենի ձայներ են հասնում. չի տեսնում Զուիցերլանդի կանաչ դաշտերը և մարգերը. նրա աչքի առաջ կանգնած է հայրենի քաղաքը և հայրենիքի սիրոյ գաղտնի ձայնը կարծես շշնջում է նրան. «Գնան, ազատի՛ր Բրէզէնցը, իմանց սուր, թէ ի՛նչ վտանգ է սպառնում նրան»:

Զտապում է նա արագ, թեթեւ քայլերով. ահա և գոմը: Գուրս է բերում նա մի լաւ ձի, որին ինքն է կերակրել, և այս ձին տանում է նրան իր հայրենիքը: Արագ թռչում է ձին գիշերային խաւարի մէջ: Ահա մարգերը և շագանակի ծառատուտանը. մնացին նրա յետեր. առաջին ծփում են փութորկայից ալիքները: Ինչի՞ է սպասում աղջիկը. միթէ ամպերը անցիւրկացնէին նրան այս ալիքներից: Զտապիր. ժամանակ չբիւրացրի՛ր: Ահա տանումէկ ժամն է խփում զանդազատան ժամացոյցը: «Տէր Աստուած, փրկիր Բրէզէնցը, հանգստացրո՛ւ ալիքները», — աղօթում է աղջիկը:

Բայց աւելի սաստիկ է շտուաջում գետը և աւելի են հեռւում ալիքները: Առաջ է նայում աղջիկը խաւարի միջից և բաց է թողնում սունձը. ձին իրան ձգում է ջուրը, կրճքով ձգում է ալիքները, արիաւար լողում, կռւում է ալիքների հետ. ահա և ճրտղները կրեւցյան հայրենի քաղաքում:



Բայց շատ ուղղաձիգ ու բարձր է ափը: Սարսափած ձին փռնչում է, յուսահատ հերպով առաջ է ձգվում և աղջկանը դուրս հանում ափը:

Եւ թռչում է նա դէպի Բրէղէնցի բարձր պարիսպները. ահա նա քաղաքի դրան մօտ է, իսկ ժամացույցը տասներկուսն է խփում: Նրա ձայնի վրայ զինուորները դուրս եկան, իմացան որ իրանց վտանգ է սպառնում: Զինուորները զրահաւորուած կանգնեցին պարիսպների վրայ և մինչև լոյսը բացուելը թշնամիներին ջարդելով լետ քըշեցին:

Եւ Տիրօյցի Աղջիկը, իր հայրենիքի փրկիչը, անմահ փառքով պսակուեցաւ:

Այն ժամանակից անցել է երեք հարիւր տարի, բայց բլուրի վրայ կանգնած է նրա քաջագործութեան կոթողը. հաւաքվում են այնտեղ Բրէղէնցի աղջիկները և նայում են արևափրտ օրիորդի վրայ: Եւ դիշխապահը, դիշերը քաղաքումը մանգալու ժամանակ, ձայն է տալիս. «ինք», «տատը», «տառնումէկ», բայց չէ ասում նա «տառներկու», այլ այդ ժամին նա լիշեցնում է բալօրին Տիրօյցի Աղջկայ անունը:

ԵՂԻՍԱՅԷ-ՄԱՐԻԱՄ Զ.

Մոսկու.





## ԼԵՌՆԱԿԱՆ ՎՏԱԿ

պիտակ, փայլուն սարի կատարից  
Ձիւնը հալվում է արևի տակին,  
Եւ մի հրաշալիօս վտակ այնտեղից  
Ծնունդ առնելով, թափվում է ուժգին:

Կամ նազում է նա քաղցրիկ շրշիւնով  
Կամ, ոստոտելով ժայռից դէպի ցած,  
Հնչում է միաձայն՝ մեղմիկ կարկաջով,  
Մանկական անքիժ խնկութեամբ լցուած:

Նայիր, վազում է, պարում, թռչկոտում,  
Արևին քնքոյշ համբույրներ տալով,  
Եւ իւր կուռական կուրծքը զարդարում  
Եօթնեակ գեղեցիկ շքեղ գոյներով:

Նա գնում է... բայց ո՞ւր: Այնտեղ, ստորոտում,  
Ինչպէս մի առիւծ՝ փրփուրը բերնին,  
Ունում է, մռնչում, սառտիկ սրտում,  
Կատաղի գետը — մուսլը դէմքին:

Նորա տղմոտ ջուրն սղտոր է ցեխից,  
Աղմուկը սաստում է օտար ձայներին,  
Եւ սարսափելի ահից, երկիւղից  
Սառանվում, դողում նոյ նիսի և գետին:



Կարկաշուն վրտակն անտեղ է դիմում,  
Այն Եղեմական երգերն երգելով.  
Դրժոխքի գետակ ներքև է եռում—  
Սա դարձեալ անդորր, դարձեալ անվրդով:

Դեռ ցած է զլորվում: Նորա առաջին  
Ահա մի ալիք բերանը բացեց  
Եւ մատաղահաս անմեղ էակին  
Իւր որովայնում խկոյն կլանեց:

Եւ կռակների մթին՝ անդունդից  
Ահա լուեցաւ մի խուլ գղրղոց.  
«Ինչո՞ւ դու, թշուա՞ռ, յստակ երկնքից  
«Իջար և ընկար մեր ուն, ցեխոտ ծոց»:

Քայց սիրուն վտակն էլ ձայն չըհանեց,  
Նորա հետքերն էլ բնաջինջ եղան, —  
Միայն ուռած դետը դուռոց փախալով,  
Փայտեր փշրելով գիմեց հեռատան:

Լ. ՄԱՆՈՒԼԵԱՆՑ





ՆԱԽԱՃԱՂԻԿ



# ՌՌՐԻՆ ԶՕՆ



6.

ՌՐԻՆՊՈՆՐ ԵՐԼՈՒ ՉԱՔԱԹԻ ԶԱՒ ՀԻ-  
ԼԱՆԴ. մնաց, յետոյ ցաւը փոքր  
ինչ թելթեւացաւ, և նա կերաւ մի ղետնախնձոր և մի  
կիւրծոն: Լամաները մօտեցան նրան և ձեռքերը լիզում  
էին. նա կ'ընէր պառաւ լամային և կաթ լամեց: Երեք օ-  
րից յետոյ արդէն կարող էր մանդալ. բակը ղնաց. կրակը  
բոլորովին հանգել էր, բայց կճուճներն այնպէս լաւ էին  
ապրիկուել, որ ասես թէ շինողը մի բլուտ լինէր: ՌՐԻՆ-  
ՊՈՆՐ ասի քանի վրայ ուրախացաւ և ասաց. «Այժմ կարող  
եմ ինձ համար միո եփել»: Սկսեց մօխիւրը փորել—մէջը  
կրակ չըկար, և անհետը եղաւ եփած միս ուտել, և ասաց.  
«Գի՛հ, ինչ կայ, ղետնախնձոր կուտեմ, կաթ կըլմեմ, յե-  
տոյ ղուցէ կրակ էլ կըճարեմ»:

ՌՐԻՆՊՈՆՐ ասանց կրակի որ մնաց, սկսաւ էլ աւելի  
ձանձրանալ և մտածում էր, թէ ինչպէս ղէպի տուն վե-  
րադառնայ: Այս նպատակով նա կամեցաւ մի մակոյցի շի-  
նել իւր համար, և գնաց Դիպտ որոնելու: Ճանապարհին  
գտաւ հնդկացորեն, որ մենք բրինձ ենք անուանում. հըն-  
ձեց մի քանի հասկ և պարկի մէջ ղրաւ: Յետոյ մի ծառ  
տեսաւ, որի վրայ աճում էր լուբիա. այս լուբիայից էլ  
քաղեց, պարկի մէջ ղրաւ. յետոյ էլի մի ծառ տեսաւ՝  
վրան մեծ-մեծ պտուղներով, որոնք կոկոնի նման էին:  
Ծառի բունը մի մեծ խողոց ունէր, և ՌՐԻՆԻՍԻՐ մտա-  
ծեց, թէ մակոյցի համար պէտք կըղար—նկատեց ծառի  
կանգնած տեղն և տուն ղնաց: Ճանապարհին մի բոյն  
տեսաւ թուլթակի ձաղերով, և ձաղերից մինը տուն տա-  
րաւ, որ սովորեցնէ նրան մի քանի լուսք ասել: Տուն որ  
եկաւ, մի վանդակ շինեց և թուլթակին մէջը ղրաւ:

ՌՐԻՆՊՈՆՐ անդադար մտածում էր—արդեօք կտրէ  
թէ չկտրէ այն մեծ ծառը: Երկար մտածեց և ասաց.

«Արկտրեմ, մակույկ կըշինեմ և կերթամ նրանով իմ Համբուրգ հայրենիքս կամ մի ուրիշ մարդաբնակ երկիր»։ Միւս օրը վաղ վերկացաւ, վերցրեց քարէ տապարը և գնաց այն ծառի մօտ։ «Այս ծառը կտրելու համար ինձ քիչից չորս տարի կըհարկաւորի, բայց որ կտրեմ վերջացնեմ—հօրս մօտ կերթամ»։ Ասաց, և սկսեց ծառը կտրել, և ամեն օր կըտրում էր։ Առաւօտը վեր կըլինար, կըլուացուէր, մի բան կուտէր և կերթար կտրելու. ճաշից յետոյ նորից կերթար. յետոյ լամաներին կըկթէր, թուփակին դաս կըտար և յողնած-յողնած քնելու կըպառկէր։ Թուփակը շուտով սովորեց արտասանել հինգ-վեց խօսք, և Ռոբինզօնը այս բանին շատ ուրախ էր, կարծում էր, թէ իւր հետ մի խօսող մարդ ունէր։ Թուփակի անունը դրել էր Պօղոսիկ։

## 7.

Այսպէս ապրում էր Ռոբինզօնը, մինչև անցաւ երեք տարի, և ամեն օր ծառը կտրում էր. բայց երեք տարուայ մէջ կէսի չափ անգամ չէր կտրել։ Մի օր նա պառկեցաւ, որ քնէ և միտք արաւ. «Արկէն երեք տարի է, որ այտեղ եմ բնակվում, բայց դեռ չըգիտեմ, թէ ի՞նչ կղզի է այս կղզին, և որքան մեծ է. դեռ ոչ մի անգամ չեմ պտտել սրա շուրջը. եկ վաղը երթամ, աչքէ անցնեմ»։

Առաւօտեան վերկացաւ, լամայի մէջքից երկու կողով կապեց, մէջը ուտելու պաշար դրեց, վերցրեց իւր աղեղը, նետերն ու տէգը, և գնաց։ Ճանապարհին շատ ծառեր էին աճում, որոնց նմանը նա երբեք չէր տեսել, և ափսոսաց, որ առաջուց ոչ մի անգամ չէր գնացել այն կողմերը մանգալու։ Ամբողջ օրը մաննեկաւ, յոգնեցաւ, մի ծառի վրայ ելաւ և այնտեղ գիշերեց։ Առաւօտեան նորից յառաջ գնաց։ Գնաց գնաց և հետքեր տեսաւ աւազի վրայ, ասեռ թէ այնտեղ բոբիկ մարդիկ էին մաննելի։ Ռոբինզօնը շատ վախեցաւ և սկսեց լստ վախճել։ Վազեց վազեց և տեսաւ, որ դեռնի վրայ մարդու ոտկորներ էին փռուած. այտեղ էլ աւելի վախեցաւ և ի՞նչ անելը չըգիտէր. գնաց և ասաց. «Այժմ բանս կտրած է. այտեղ վայրենիներ են գալիս և մարդ են ուտում. կիմանան, որ



այստեղ եմ—ինձ էլ կուտեն»։ Զուտ-շուտ գէպի տուն վա-  
զեց. արդէն մութն էր։ Պառլի վրայ բարձրացաւ և ար-  
դէն քնելու վրայ էր, որ յանկարծ մէկը նրա անունը  
տուաւ։ Ռոբինզօնը նորից վախեցաւ, չորս կողմը նայեց.  
տեսաւ, որ դա իւր թուլթակն էր, որ թռչելով իւր մօտ  
էր եկել։ Ռոբինզօնը իւր մօտ կանչեց նրան. թուլթակը  
նրա ձեռքի վրայ իջաւ և նորից կանչեց. «Խեղճ Ռոբին-  
զօն, ո՛ր ես, ո՛րտեղ ես ընկել»։

Ռոբինզօնը հինգ օր վրայ-վրայ հողս էր քաշում թէ  
ինչ անէր, որ վայրենիները նրան չըզտնէին, և մտածեց  
քաղել ուռենիների նման փոքրիկ ծառեր և իւր քարայ-  
րի առջև մի փոքրիկ անտառ տնկել, որ նա ծածկուած  
մնայ։

Երկար աշխատեց ծառերն արմատով հանելու և քա-  
րայրի շուրջը տնկելու համար. և այսպէս մի փոքրիկ ան-  
տառ յառաջ եկաւ։ Անտառը տնկելուց յետոյ ասաց ինքն  
իրան. «Հաղան եթէ վայրենի մարդիկ այս անտառը այ-  
րին և կամ ծառերը կտրտեն, ինձ էլ քարայրիս մէջ սպա-  
նեն. լաւ կըլինի որ ես հողի տակից մի անցք փորեմ գէ-  
պի մեծ անտառը, որ երբ նրանք այստեղ գտն, անտառ  
փախչիմ այն անցքով»։ Եւ նա փորեց այդ անցքը։

Ռոբինզօնն էլի չորս տարի բնակեցաւ. բայց վայրե-  
նիները չէին գալիս։

Մի ժամանակ Ռոբինզօնը իւր հաստ ծառը կտրելու  
վրայ էր, երբ յանկարծ մի սև ծուխ նշմարեց սարի ե-  
տեկից։ Բարձրացաւ սարի վրայ, որ տեսնէ թէ ո՛րտեղից  
էր այն ծուխը, և տեսաւ ծովափի վրայ շատ վայրենի  
մարդիկ, որոնք եկել էին նաւակով, կրակ էին վառել և  
կրակի շուրջը պարում էին։ Ռոբինզօնը տեսաւ, որ նրանք  
նաւակի միջից իրանց նման երկու վայրենի մարդ հանե-  
ցին—մէկին սպանեցին, կրակի վրայ խորովել սկսան, միւ-  
սը ձեռքերից փախաւ և ուղիղ գէպի այն կողմը վազեց,  
ուր որ նստած էր Ռոբինզօնը։ Վայրենին շատ շուտ էր  
վազում. ետեկից էլ վազում էին երկու մարդիկ։ Երբ սրանք  
Ռոբինզօնին մօտեցան, Ռոբինզօնը զարկեց տէգով մէկի  
փորին, և վայրենին վալը ընկաւ։ Միւս վայրենին նետ  
արձակեց Ռոբինզօնի վրայ. նետը գիպաւ նրա հագած մոր-

Թուն և յետ Թաւ: Յետոյ Ռորինգօնը վազեց օղ Վայրենու վրայ և սպանեց: Իսկ առաջին վայրենին, որին կամենում էին բռնել, Ռորինգօնին որ տեսաւ, շատ վախեցաւ. կարծեց, թէ նա մարդ չէ, մի ուրիշ էակ է. որովհետեւ վայրենիները տկար են մանգալիս, իսկ Ռորինգօնը պատած էր լաթերով և լամպի մորթերով, գլխին սրածայր ու բարձր գտակ ունէր և երեսի վրայ մորթի դիմով: Ռորինգօնը ձեռքով նշան տուաւ, որ վայրենին մօտենայ. վայրենին եկաւ, չոքեց, բռնեց Ռորինգօնի ոտքերն և իւր մէջքի վրայ գրաւ: Ռորինգօնը կանդնեցրեց նրան և իւր տէգով զարկած վայրենու վրայ ցոյց տուաւ. սա դեռ կենդանի էր: Փախստական վայրենին տապարն առաւ և ընկած վայրենուն սպանեց, յետոյ մի փոս փորեց և երկու դիակներն էլ մէջը թաղեց: Ռորինգօնը և ազատուած վայրենին վերցրին սպանուածների նետերը և գնացին Ռորինգօնի քարայրը:

Ռորինգօնը վախենում էր, թէ վայրենիներն իրանց ընկերներին պարելու կերթան և նրան կրղտեն. բայց վայրենիները կանչեցին, կանչեցին—այնպէս էլ հիւսցան:

Ռորինգօնը իւր ազատած վայրենու անունն Ուրբա թ գրաւ, որովհետեւ ուրբաթ օրն էր ազատել: Ուրբաթը դեռ մի երկտասարդ տղայ էր աւ մարմնով: Նրանք միասին ընթրիք արին. յետոյ Ռորինգօնը լամպին կիթեց, իսկ Ուրբաթին աչքերը բաց նայում էր և չէր հասկանում, թէ Ռորինգօնի արածն ինչ էր: Վայրենի մարդիկը կաթ չեն կիթում, չեն էլ իմանում, որ կաթն ուտել կարելի է: Յետոյ պառկեցան քնելու—Ռորինգօնը քարայրի մէջ պառկեցաւ, իսկ Ուրբաթին հրամայեց մառանի մէջ պառկելու:

Ռորինգօնը և Ուրբաթը մէկմէկու չէին հասկանում, որովհետեւ ջուկ-ջուկ լեզուով էին խօսում: Ռորինգօնն Ուրբաթին մի բան ասելու որ լինէր, մատերով էր նշան տալիս. Ուրբաթն էլ նոյնն էր անում, նրանք քիչ-քիչ սովորում էին հասկանալ մէկմէկու:

Առաւօտեան նրանք վայրենի մարդոց իջած տեղը գնացին: Այնտեղ կերումը մարդոց ոսկորների գտան: Ռորինգօնը Ուրբաթին նշան արաւ, որ այն ոսկորները միասին հաւաքէ և դեանի մէջ թաղէ: Ուրբաթը թաղեց. իսկ



Ռոբէրնդօնն սկսեց քրքրել մօխիւրը, որ տեսնէ կրտսի մնացել էր թէ ոչ: Կրտսի չէր մնացել: Քանի որ Ռոբէրնդօնը մօխիւրը քրքրելու վրայ էր, Ուրբաթն առաւ տապաւրը և անտառ վաղեց: Ռոբէրնդօնը չկարացաւ հասկանալ, թէ ինչո՞ւ անտառ վաղեց. իսկ Ուրբաթը անտառ մտաւ թէ չէ՝ երկու կտոր փայտ կտրեց և սկսեց ուժով մէկը միւսին քսել. փայտերը բռնկեցան, և Ուրբաթը ձեռքում կրտսի բռնած շուտ շուտ վաղելով յետ եկաւ: Ռոբէրնդօնը շատ ուրախ էր, որ այժմ նորից կրտսի պիտի ունենար, կրտսին առաւ և Ուրբաթի հետ միասին դէպի տուն շտապեց: Տուն որ եկան, Ռոբէրնդօնը թոնիրը վառեց, մի ուլիկ մորթեց, միւր շամփուրի վրայ անցկացրեց և սկսեց խորովել. յետոյ կրտսի մէջ գետնախնձոր ձգեց: Ռոբէրնդօնը լիշեց որ լաւ կճուճներ ունէր և թէ կարելի էր մի լաւ խաշու պատրաստել: Բռնեց կճուճի մէջ ջուր լցեց, մէջը մի մեծ կտոր միս և գետնախնձորներ ձգեց և կրտսի վրայ տեղաւորեց, որ եփ գայ: Ուրբաթը նայում էր թէ ինչ գուրս կը գայ այս բանից. վայրենիները ոչ մի բան չեն եփում, հապա միայն խորվում են:

Ռոբէրնդօնին պէտք եղաւ մի բանի համար գուրս դնալ. իսկ Ուրբաթը նստած նայում էր կճուճի վրայ: Զուրը որ սկսեց եռալ, Ուրբաթը կարծեց, թէ կճուճի մէջ մի կենդանի էր ընկել և ջուրը պղտորում էր. ձեռքը ջրի մէջ խոթեց, որ կենդանուն դուրս հանէ, և այնպէս ստատիկ գտաւ, որ Ռոբէրնդօնը վախեցաւ: Խաշուն եփուելուց յետոյ՝ Ուրբաթը չէր ուզում ուտել—վախենում էր, իսկ Ռոբէրնդօնը մեծ ախորժակով կերաւ, որովհետեւ արդէն վաղուց տաք բան չէր կերել:

## Յ.

Ռոբէրնդօնն ապրում էր Ուրբաթի հետ և նրան խօսել էր սովորեցնում: Ուրբաթը շուտով սկսեց հասկանալ նրան: Ռոբէրնդօնն ինքն էլ սովորեց փոքր ինչ խօսել Ուրբաթի լեզուն: Նրանք երկուքը միասին աշխատում էին էլ առեւի ամրացնելու պարիսպը: Վախենում էին վայրենիները նորից չըգան. այս պատճառով պարիսպի շուր-

Ջը փոս փորեցին, և այսպէս միասին ապրում էին:

Մի օր Ռորինգօնն առաց Ուրբաթին. «Ուրբաթ, կուգէ՞ր աղգականներդ. հետ միասին լինել»:

Ուրբաթն առաց. «կուգէ՞ր»:—Ռորինգօնն առաց. «Հապա մարդու միտ ուտել կուգէ՞ր»:

Ուրբաթն առաց. «Չէ, չէի ուզի. աղգականներու էլ կասեմ որ մարդու միտ չուտեն, Հապա կենդանիների միտ և կաթ ուտեն»:

Ռորինգօնն առաց. «Ուզում ես, մի մակույկ շինենք, և դու քո երկիրը կերթաս»:

Ուրբաթն առաց. «Քեզ հետ երթալ չօժար եմ. մէնակ զնայ չեմ ուզում»:

Ռորինգօնն առաց. «Գնանք, Ուրբաթ, շինած մակույկ տեսնենք»:

Գնացին: Ռորինգօնը իւր կտրած ծառը ցոյց տուաւ. իսկ Ուրբաթը ծիծաղեց: Ռորինգօնն առաց. «Ինչո՞ւ ես ծիծաղում, Ուրբաթ»:

«Ինչպէս չըծիծաղեմ, Ինչո՞ւ ես քարով փորել մակույկի մէջ տեղը, երբ կրակով այրելն աւելի հեշտ էր»:

Ռորինգօնն այդ խօսքերից շատ ուրախացաւ:

Բայց նրանք չէին կարող աշխատել, որովհետեւ անձրևների ժամանակը նորից հասել էր: Այժմ նրանք սկսեցին ճարպի ճրագներ շինել և երեկոները խօլը էին հիւսում. խօլից կաբաներ և վարտիկներ պատրաստեցին: Յետոյ բարակ չուաններից ուռկան շինեցին:

Ռորինգօնն ուզում էր, որ Ուրբաթը քրիստոնեայ դառնայ, և ասում էր նրան, որ մի Աստուած կայ, մի Յիսուս կայ, և Ուրբաթը նրան լսելով՝ սովորում էր երկրորդական ճշմարիտ Աստուծուն, մինչդեռ առաջ կուռք էր պաշտում:

Անձրևները մի քանի ժամանակից յետոյ դադարեցան և Ռորինգօնն սկսեց Ուրբաթի հետ մակույկի վրայ աշխատել: Երկու ամսից յետոյ նրանք շինեցին մի մեծ մակույկ, առաջատար խօլից շինեցին, թիակները՝ փայտից: Յետոյ սկսեցին մակույկը դէպի ծովը քաշել, ամբողջ մի ամիս քաշում էին, որովհետեւ մակույկը ծովեզրից հեռու էր:

Ուրբաթը կոմենում էր նաեւ դէպի իւր երկիրը, իւր



կղզին. իսկ Ռոբինզոնն այնտեղ, ուր որ սպիտակ մարդիկ  
կան: Երկար վեճից յետոյ Ռոբինզոնն Ուրբաթին ասաց.  
«Եթէ ուզում ես վայրենիներ լինել մօտ գնալ,—մէնակ գնա.  
Ես չեմ գնալ»:

. Ուրբաթը չէր կամենում առանց Ռոբինզոնի մէնակ  
գնալ և ասաց. «Գէ լաւ. սպիտակ մարդոց մօտ գնանք.  
բայց ես ճանապարհը չըզիտեմ»:

Ուտելու սրաշար առին, մակույկի մէջ դրին, նստան  
գնացին: Քամին յաջողակ էր, և նրանք շուտ-շուտ յա-  
ռաջ էին գնում: Յանկարծ այնպիսի մի տեղ ընկան, ուր  
ջրի ընթացքը սաստիկ էր և նաւակն ասեռ թէ ինքն ի-  
րան էր յառաջ մղվում: Առաջատու հանեցին. բայց մա-  
կույկն էլի խիտտ արագ էր թռչում: Այն ժամանակ Ուր-  
բաթն ասաց.

«Տէր իմ, եկ ծովն ընկնենք, թէ չէ՝ Աստուած գիտէ  
նւր կըտանեն մեզ ալիքները»:

«Ռոբինզոնն ասաց. «Չէ. եկ Աստուծոյ աղօթք ա-  
նենք. դույէ Աստուած կըտայ—կազատուինք»:

Նրանց կղզին զրեթէ էլ չէր տեսնվում, և Ուրբաթն  
ասաց. «Նայիր, տէր իմ, մեր կղզին արդէն ծածկուե-  
լու վրայ է. ինչպէս յետ դառնանք—ճանապարհը չենք  
գտնիր»:

Հէնց որ նա այս ասաց, մակույկն աւելի ծանր շար-  
ժիլ սկսաւ, և Ռոբինզոնը նկատեց, որ այժմ ջրի հոսանքն  
աւելի հանգարտ էր: Նրանք յետ դարձան, հեռացնելով  
մակույկն այն տեղից, ուր ջուրը շատ այնկոծվում էր, և  
կամայ-կամաց դէպի տուն նաւեցին: Երեկոյ էր, երբ կըզ-  
գուն հասան: Չատ սոված էին, որովհետև առաւօտից  
սկսած ոչինչ չէին կերել. կուշտ ընթրիք արին, պառկե-  
ցան քնեցին:

Առաւօտը որ լուսացաւ, Ռոբինզոնն ասաց Ուրբաթին.  
«Ուրբաթ, արի նորից ճանապարհ ընկնինք»:

«Ուրբաթն ասաց. «Չէ, լաւ է՝ քեզ հետ այստեղ մը-  
նամ: Եթէ հայրս էլ այստեղ լինէր, շատ ուրախ կըլի-  
նէի»: Ռոբինզոնն ասաց. «Գէ ինչ կայ—գնանք, հօրդ  
բերենք»:

Ուրբաթն այս լսելով, շատ ուրախացաւ և ասաց,

Թէ իւր հօր կղզին տանող ճանապարհը լաւ զիտէ, որովհետեւ շատ անգամ իւր ազգականների հետ այն տեղից այս կողմ էր եկել մարդ ուտելու համար:

Ուրբաթը երկու հատ թի շինեց ամուր փայտերից և սկսեց նրանցով գետինը փորել, որ մէջը գետնախնձոր տնկէ. յետոյ նա և Ռոբինզօնը միասին մի բանջարանոց և մի փոքրիկ պարտէզ տնկեցին: Երբեմն նրանք ձուկն էին որսում և լողանում էին: Ուրբաթը շատ լաւ լող տալ զիտէր: Երբեմն էլ զնում էին նետերով թռչուն կամ լամա դարնելու:

Ուրբաթը սովորեցրեց Ռոբինզօնին հաց շինել մի տեսակ ծառի պտուղներից. այս հացը սովորական հացի նման համեղ էր:

Բանջարանոցի և պարտիզի գործերը որ վերջացան, Ուրբաթն ասաց Ռոբինզօնին. «Տէր իմ, գնանք հօրս ետեւից»: Ռոբինզօնն ասաց. «Չատ լաւ»:—Մակոյկը կարգի բերին, ճանապարհի համար մի ամբողջ լամա խորովեցին, զանազան պտուղներ քաղեցին և պառկեցան քնելու:

## 9.

Հէնց որ պառկել էին քնելու, մի փոթորիկ բարձրացաւ, անձրև տեղաց և ամպերը որոտացին: Ռոբինզօնն ասաց. «Լսում ես, Ուրբաթ. եթէ այժմ ծովը վրայ լինէինք, կրիւնդուէինք»: Ասաց թէ չէ, չանկարձ թնդանօթների գոռում լուեցաւ: Նա խոհանոց վաղեց, մի մեծ խանձող առաւ, սանդուղի վրայով ժայռի վրայ ելաւ և այնտեղ մի մեծ կրակ վառեց, որ հեռուից էլ տեսանելի լինի: Կարծում էր թէ մի նաւ էր ընկղմում և օդնութիւն է խնդրում: Բայց կրակը հանգաւ անձրևից. Ռոբինզօնը տասն անգամ վառեց, անձրևը նորից հանդգնում էր—այսպէս էլ կրակը հանգած մնաց:

Ռոբինզօնն ամբողջ զիշեր լսում էր թնդանօթների բոմբիւնը և մտածում էր, թէ նաւը եղբրքի մօտ կանգնած կըլինի և նրան համբուրդ կըտանէ: Արշալուսին վերկացաւ և զէպի վեր փաղեց տեսնելու, թէ նաւը սրտեղ էր. սչինչ չըտեսաւ: Յետոյ վաղեց ելաւ մի աւելի բարձր



Ժայռի վրայ, և քիչ մնաց որ ուրախութիւնից մեռնէր: Եզերքից փոքր ինչ հեռու մի նաւ էր կանգնած: Ռորինգօնը գէպի տուն վազեց և կանչելով ասաց Ուրբաթին. «Եկան, եկան»: Ուրբաթը կարծեց, թէ վայրենիներն են եկել. առաւ տէղը, նետերն ու աղեղը և վազեց Ռորինգօնի ետեւից գէպի ծով: Այնտեղ նաւը տեսաւ: Ռորինգօնը և Ուրբաթն իսկոյն ափի վրայ կրակ վառեցին. բայց նաւի վրայ ոչ ոք չէր երևում: Եւ Ուրբաթն ասաց Ռորինգօնին. «Տէր իմ, թող տուր ինձ լող տալ գէպի նաւը»: Ռորինգօնն ասաց. «Դէ գնա»:

Ուրբաթը Հանեց իւր շորերը և լողաց: Ռորինգօնն ափի վրայ կանգնած նայում էր նրա ետեւից: Երբ Ուրբաթը մօտեցաւ նաւին, նրա վրայ սաստիկ կերպով հաջեց մի կենդանի: Ուրբաթը սարսափեցաւ. լետոյ նաւի վրայ ելաւ. կենդանին սկսաւ կանչել և նրա ձեռքերը լզել: Դա մի շուն էր, իսկ Ուրբաթը իւր օրում շուն ասած կենդանին չէր տեսել: Մինչ ուրբաթը նաւի վրայի իրերը զննելու վրայ էր, լսնկարձ մի հարուած ստացաւ ետեւից և վաւր ընկաւ: Յետ որ նայեց, տեսաւ որ հարուած տուողը մի հրէշ էր՝ մօրուքով և եղջիւրներով. այս հրէշը ետեւի ոտքերի վրայ կանգնած կամենում էր նորից զարնել նրան: Ուրբաթը կարծեց, թէ իւր տեսածը սատանայ էր, և ջրի մէջը թռաւ, շունն էլ ետեւից: Լող տալիս՝ Ուրբաթը լսում էր, որ ետեւից մէկը գալիս է. կարծեց թէ եղջիւրաւորը հրէշը ուզում էր բռնել նրան—և սաստիկ վախից հագիւ հազ ափը հասաւ: Հասած չհասած՝ գետնի վրայ ընկաւ շնչառաւ: Ռորինգօնը վախեցաւ. կարծում էր, թէ Ուրբաթն մեռել է. գրկեց նրան և սկսաւ անուշը տալ: Ուրբաթը աչքերը բանալով պատմեց ահեղ հրէշի պատճառած սարսափը: Եւ Ռորինգօնն ասաց. «Ջուր ես վախեցել. նա հրէշ չէ, մի այծ է. մեզ մօտ այժմեր շատ կան»: Իսկ Ուրբաթն ասաց. «Որտեղից իմանայի, թէ այժմ ինչ է. կարծում էի—սատանայ է»:

Չունն այն միջոցին լողալով ափին ելաւ: Ռորինգօնն Ուրբաթին ասաց, թէ Եւրոպայում, ուր սպիտակ մարդիկ են բնակում, շատ շներ կան:

Երբոր Ուրբաթը ուշքի եկաւ, Ռորինգօնը նրան ա-

սաց. «Նաւի մարդիկը երևի խեղդուել են. գնանք, նաւի մէջ եղած բաներն այստեղ բերենք, թէ չէ՝ զուր տեղը կրկորջին»։ Ուրբաթն էլ ասաց. «Գնանք մեր մակուկը նրոտենք և նաւին մօտենանք»։

Գնացին, ուր որ մակուկը կապած էր, բայց մակուկը չըկար. փաթորիկը նրան ծովն էր տարել։ Ուրբաթն սկսեց լաց լինել, մազերը փետել, ձեռքերը տրտել։ Ռոբինզօնն ասաց. «Մի՛ լար, Ուրբաթ»։ Ուրբաթն ասաց. «Ի՛նչպէս չի լամ. հիմա՛յ ինչո՛ւ պիտի երթամ հօս մօտ»։ Ռոբինզօնն ասաց. «Ամօթ քեզ, Ուրբաթ, որ լաց ես լինում։ Ատուած աչնպէս է կամեցել, պէտք է որ մենք էլ նրա կամքին հնազանդինք»։ Ուրբաթը ամաչեց և ասաց. «Դէ լաւ. էլ լաց չեմ լինիլ։

Եւ Ռոբինզօնն ասաց. «Ուրբաթ, եկ մի լաստ շինենք, և լաստով նաւին հասնենք»։

Սկսան լաստ շինել. ամբողջ օրը և գիշերուայ կէսն աշխատեցան. առաւօտեան նոտան և նաւի մօտ գնացին։ Երբ հասան, Ռոբինզօնը տեսաւ, որ նաւը մի ծանծաղի վրայ էր նստել և անկարելի էր տեղից շարժել նրան, որովհետև ամուր էր խրուել աւազի մէջ։

Ուրբաթը շատ վախենում էր բարձրանալ նաւի վրայ, կարծելով թէ այժը նորից կըհարուածէ նրան. բայց այժը վերկենալ անգամ չէր կարենում—երեք օր ոչինչ չէր կերել։ Ռոբինզօնն ուտելու բան տաւաւ նրան. այժը խիստ շատ կերաւ, կշտացաւ և սկսեց վազվզել ու թռուկոտել նաւի վրայ։ Ռոբինզօնը զնայ նայելու, թէ ինչ կայ նաւի մէջ։ Տեսաւ պաքսիմատով, ալիւրով, ցորենով, գինով լի պարկեր և տախառներ. տեսաւ շատ հրացաններ, վառօդ, կապար, կացիններ, սղոցներ, զանազան հագուստներ։ Ռոբինզօնն այս բոլորի վրայ շատ ուրախացաւ. իսկ Ուրբաթն ապուշ-ապուշ նայում էր և չէր հասկանում, թէ ինչ բանի կարող էին պէտք զալ այդ իրերը։

Նրանք ամեն բանից առաջ մի տախառ վառօդ և կապար վերցրին, յետոյ երկու հատ կաբայ, երկու զոյգ շապիկ-վարտիկ, երկու զոյգ կօշիկ, երկու հատ կացին, երկու հատ սղոց,—վերցրին թուղթ, զրիչ և թանաք, մի հրահան, մի կայծքար և պատրոյկ, մի տախառ պաքսի-



մատ—և այժմ: Յետոյ նստան ճաշ ուտելու նաւի վրայ: Ռոբինզօնը մի գանսիկ և մի պատառաքաղ տուաւ Ուրբաթին: Ուրբաթը չըզիտէր, թէ պատառաքաղը ինչ բանի համար է. Ռոբինզօնը ցոյց տուաւ:

Ճաշը օր կերան, դէպի եզերքը նաւեցին: Ռոբինզօնը թուփերի ետև դնաց և ղինուորի շորեր հագաւ: Ուրբաթը չըճանաչեց նրան. կարծեց թէ մի օտար մարդ է: Ռոբինզօնը նրան էլ շորեր տուաւ, բայց նա հագնելու կերպը չըզիտէր. վարտիկը ղլխին էր անցկացնում, ոտքերը թւեքի մէջ խոթում: Ռոբինզօնն օգնեց նրան, և Ուրբաթը հագնելուց յետոյ ինքն իւր վրայ օր նայեց, սկսաւ խնդալ և վեր-վեր ցատկել: Ռոբինզօնը սոսի բռնելու կերպն էլ ցոյց տուաւ նրան. յետոյ նրանք մի ծառ կտրեցին և կայմ ու թիւր շինեցին, որ մակուկն աւելի լաւ քայլէ:

Ռոբինզօնը քարայրը ղրկեց Ուրբաթին, որ երթայ լամաներին կթէ. իսկ ինքը մի հրացան լքցրեց: Երբ Ուրբաթը վերադարձաւ, Ռոբինզօնը նրան ասաց. «Նայի՛ր, Ուրբաթ. տեսնո՞ւմ ես, վերևում մի ուրուր է թռչում. իսկոյն վայր կրնկնի»:

Ռոբինզօնն նշան տուաւ ուրուրին և հրացանը պարպեց: Ուրբաթը սարսափեց ծունկերի վրայ ընկաւ: Ռոբինզօնն ասաց. «Ի՛նչ ես վախենում»: Եւ ցոյց տուաւ թէ ինչպէ՞ս է պալթում հրացանը. նրա առջև լքցրեց, մի տախտակ ղրեց և արձակեց: Ուրբաթը նորից պիտի վայր ընկնէր, և շուտաւժ ասաց. «Այս ի՛նչքան լաւ բաներ են հնարել սպիտակ մարդիկը—մինչև անգամ կենդանի՝ կրակ են հնարել»:

Միւս օր նրանք վերստին դէպի նաւը գնացին: Այս անգամ լաստի վրայ մի թնդանօթ ղրկին, մի-մի պարկ ցորեն, զարի, սխեռ, մի արկղ գամ, մի տակառ վառօդ ու կապար, մի մեծ առադաստ և մի յետան (սրելու քար): Այս բոլորը ծովափ տանելուց յետոյ՝ երկրորդ անգամ նաւի վրայ եկան, ոսկի և պատուական քարեր վերցրին: Եւ Ուրբաթն ասաց. «Ռոբինզօն, ինչո՞ւ ես վերցնում այս ոսկին և ակները. Մեր կղզու վրայ ոչ ոք չէ բնակում. զրնելու բան չըկայ, ծախող էլ չըկայ»: Ռոբինզօնն ասաց. «Վերցնում եմ, որ եթէ մի օր սրանց տէրը գտնուի, յետ

տամ իրան, և նա ուրախանայ»: Այս անգամ Ռոբինզոնը հանեց նաւից զրուած թղթեր, մի քանի մօմ, սղոցներ, տապարներ և բահեր:

Կզղին որ հասան, Ռոբինզոնն ասաց Ուրբաթին. «Ե՛կ, կտաւից մի վրան կարենք մեզ համար. թէ չէ՝ անձրև որ գայ, վառօդը կըթըջէ»: Ուրբաթը շուտով կար կարել սփորեց, և նրանք մի վրան շինեցին առադաստից:

Ռոբինզոնը մի մեծ ուռմբ դրեց թնդանօթի մէջ և արձակեց ծովի երեսին. ուռմբը որոտալով թռաւ ընկաւ ծովի մէջ: Եւ Ուրբաթը ասաց. «Հազար ու հազար վայրենիք էլ որ գան, վախից կերթան կրփախեն, եթէ այսպիսի մի ուռմբ արձակես նրանց վրայ: Կըկարծեն թէ իրանց Թուփան աստուածն է որոտում»:

Երեկոյեան Ռոբինզոնը մօմ վառեց և սկսեց կարդալ զրուած թղթերը: Ոչինչ չըհասկացաւ, որովհետեւ թղթերը սպանիական լեզուով էին գրուած. իսկ նա այդ լեզուն չըգիտէր: Միայն այսքան իմացաւ, թէ նաւն Ասիա էր նաւում և 100 հոգի գերի մարդիկ էր տանում՝ այնտեղ վաճառելու համար:

Ռոբինզոնն այս բոլոր թղթերը, տիկին և թանգուդին ակները պահեց և ասաց. «Թող կենան. զույգ տէրերը մի օր յայտնուին»:

Փ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

(Կը շարունակուի)





## ՀԱՐԱՐԱՂՅԻ ՄՕՐ ԵՐԳԸ

(Նրիսային փայփայելով)

Վարսենիկս կռնալ ա,  
Վարդն իրեռին փռռալ ա,  
Ամեն ծառից մին փշատ,  
Վարսենիկս ումըրը շատ:

---



ՀԱՐԱՐԱՂՅԻ ԿԻՆ

---

## ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

**Շահաւէս փողոցներ:** —

Շատ տարի առաջ Ռոբինսոն անունով քաղաքի մօտ կառուցուած էր առաջին մետաղ հալելու բովանոց. նոր աւանի փողոցները քարում էին այն ժամանակ հալած մետաղից մնացորդ բռնջներով: Բայց որովհետեւ մետաղահալութեան հին եղանակով արծաթի միայն կէս մասն էր զուրս դալիս, իսկ կէս մասը մնում էր այրուած բռնջների մէջ, ուստի մօտ ժամանակներս մօտեցին քաղաքի բոլոր փողոցների քարերը նորից հալել ժամանակակից կատարելագործեալ բովանոցով: Հիմա յիշեալ քաղաքի բոլոր փողոցները դարձել են նշանաւոր շահի աղբիւր, այնպէս որ այդ սրամիտ գործի ձեռնարկողները մինչեւ անգամ քաղաքի վարչութեան տալիս են իրանց ստացած արդիւնքից 20 տոկոս շահ:

**Նւամսէայ նինջ:** — Վոլինսկի նահանգի Զաւլալ աւանում այժմ դիտողութեան ենթակայ է՝ դիտնական կողմից՝ մի նշանաւոր դէպք. այնտեղի բժիշկներից մէկի մօտ դտնվում է այժմ մի հիւանդ, 16 տարեկան դիւլայի աղջիկ, որ ընկղմած է խոր նիրհման մէջ, որ շարունակվում է արդէն 84 օր. այդ բոլոր միջոցին նա կերակուր չի ընդունել:

**Խարազան և գաւազան:** — Խորս պարսկերէն կընշանակէ էշ,

իսկ գաւ նոյն լեզուով նշանակում է կով. իսկ գան — զանել միեւնոյն է: Թէ գան — զանել, որ նշանակում է վարնել, զան հարկանել, խիել, հարուածել. ուրեմն, խարազան եւ գաւազան բառերից, ստացինք նշանակում է **խաչար**, իսկ երկրորդը — **կովաչար**:

**Կոչնակ:** — Մի քանի հայաբնակ տեղերում, ուր տիրում է մահմետական մոլեռանդութիւնը, օրինակ Պարսկաստան, նոյնպէս եւ Տաճկաստան, հայերը զրկուած են զանգեր գործածելու ախորժութիւնից: Իրա փոխարէն սովորական կիրառութեան մէջ է «կոչնակ»՝ անունով անմեղ գործիքը, որ է մի կիսաբոբարակ տախտակ. դրան ժամկոչը կոխում է վզից եւ վաղ աւուստեան արադ — արադ սրտում է ամբողջ թաղը, ամեն դուռն կամ յերդիկի մօտ զարնելով տախտակին, հրաւիրում է ժողովրդին եկեղեցի դալու, ընդունում է մի կոչում է. «Ողորմի Աստուած»:

**Զգուշութիւն:** — Համակապրօշմներն այժմ խեղճ չեն սօսընծում, վասն զի խեղճ գինը վրնալով աճում է, այլ օգլաւէժով: Ուստի նամակադրոշմները լեզուով Թայ անելը՝ եթէ ոչ վնասակար, դէթ անախորժ եւ տհաճոյ կըլինի լեզուին:





### ԹՈՒԱՐԱՆԱԿԱՆ ՖՕԿՈՒՍ

20-ից հանել 22, որ մնայ 88.

### Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

Առաջ. Ա. Տ.-խաչատրեանց.

Ամբողջն եռալանի մի ղեղեցիկ բառ,  
Սկիզբն է մեծ «Ա», վերջինը «տ» տառ.  
Եթէ կամենաս, որ հեշտ հասկացուին,  
Առ ահա տամ քեզ նորա բանալին:  
Առաջին վանկը երեք ունի գիր,  
Հերկիր երկիրը ու հանգիստ գտիր.  
Երկրորդն է ղերանուն, միշտ երկրորդ գէմքով,  
Մարդ ճանաչվում է նորա ցուցմունքով.  
Իսկ վերջին վանկի նշանականը,  
Գլուխ է կոչում հայ լեզուաբանը:  
Մենք եթէ երրորդ վանկի սկզբին  
Մի տառ կալցենք երկրորդ վանկից,  
Այնժամ կրտանաք մի փափուկ մարմին,  
Որ կա՛ծ առնելով՝ իսկոյն կրվառուի:  
Իսկ եթէ երկրորդ վանկի առաջին  
Մի տառը յօդենք առաջին վանկին,  
Կրտանանք ծաղիկ բաց կարմիր դոյնով,  
Որ մայլոսեան է, շատ տնուշ հոտով:

## Հ Ո Ւ Տ Ա Ս Ե Լ Ո Ւ Կ

Ծաղկազարդին ծառազարդին,  
Ծառազարդին ծաղկազարդին:



### ԼՈՒԾՈՒՄՆ Յ. ՂԱԶԱՐԵԱՆՑԻ ՀԱՆԵԼՈՒԿԻ

Լուծեց Յովհաննէս Գրիգորեանց:

Առաջարկութիւն պ. Ղազարեանցի կարգացի  
Ութ տառանի բառ փնտրեցի,  
«Վերնագիր լինելն որ լսեցի,  
«Արձադանք» շաբաթաթերթն լիշեցի:  
Ութ տառերն փոփոխեցի,  
Տասն թիւն լրացուցի,  
Հետեւեալ բառերն կազմեցի՝

Արձադանդ, արձան, քնար, Արա (ղեղեցիկ), դանձ, ձագ,  
արսոգ, քար, ձագար և անագ:

|   |    |    |   |   |
|---|----|----|---|---|
|   |    | Մ  |   |   |
|   | Մ  | ու | 2 |   |
| Մ | ու | 2  | ե | ղ |
|   | 2  | ե  | ն |   |
|   |    | ղ  |   |   |

Նախընթաց №-ի մէջ եղած Հանելուկ-  
ների բացատրութիւնը. 1) գնդդակ. 2)  
ոննեակ. 3) փետրուար ամիսն. 4) տաշտ  
և իմօր «Արձադանք»:

Խմբագիր-հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՂԱԶԱՐԵԱՆՑ